


„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.



Adresse: REDACTION DU JOURNAL „Droschak“ GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՍԱՍՈՒՆԻ ԵՕԹՆԱՄԵԱԿԸ...

Հպարտ, քաջարի, անյողջողջ Սասունը կրկին լուրջ-նամու ոտի տակ է—երկրորդ անգամ 7 տարւայ ընթացքում...

Դեռ չընեցին հազարաւոր զոհերի հառաչանքները, Գալլօրիկի սարալանջերը կարմիրով ներկւած՝ դեռ չը մաքրւեցին արեան հետքերից, չը կարողացանք մենք ճշտել դեռ 1894 թւին տւած մեր կորուստների քանակը, չը կարողացանք դեռ պարզել ո՛չ շէնընցի ուէս Գրգոյի, ո՛չ Քելիեգուզանի ուէս Աւէի փայլուն պատկերները,—և ահա կրկին ընդհարում, կրկին աւերումներ, կրկին զոհերի ուրականներ Սասունում...

Օգոստոսի 21-ին ուռու-տաճկական սահմանադիւից Pro Armenia-ի և մեր ստացած հեռագիրը, որ արդէն ցրւել է եւրոպական լրագիրներին, գուժեց:

Մուշի շրջակայքում նոր անդթուծիւններ տեղի ունեցան: Աւազակախմբեր համիդիէների և կամոնաւոր զօրքերի աջակցութեամբ թալանում և սպանում են յուլիսի 3-ից սկսած: Ոչնչայրած են Մանիկի, Գուրալու, Իկտար (°), Շէրյան, Միալու և լին: Բնակիչները փախչում են լեռները: Վանից և Բիթլիսից եկած քիւրդերը և զօրքերը գրաւում են Սասունի բարձրութիւնները և ուզում են բռնի շինել սոյ զօրանոցներ Դալօրիկում, Գելիեգուզանում և Շէնիկում: Ժողովուրդը, սարսափահար, մերժում է և իր հայրենիքից հեռանալու համար խնդրում է հիւպատոսների պաշտպանութիւնը: Սօ (°) և Դալօրիկը աւերւած են: Ընակիչները ապաստանել են լեռները: Նիանլի աշիրէթը գրաւել է Դալօրիկը:

Տաճիկ կառավարութիւնը ամէնուրեք և անդադրում առաջ է տանում իր օրհասական վճիռը: Չեքըր փոխւում են, բայց էութիւնը մնում է միշտ միևնոյնը: Այնտեղ ուր նա հաստատւած է արդէն, ջնջում, խեղդում է հայ տարրը անսիրտ և ամենավայրենի հալածանքներով: Մի ուրիշ տեղ, ուր հայը, թշուառութեան երկաթէ ճանկերում սղմած, ստիպւած է ամէն ինչ զոհել քայքայող պետութիւնն, ինչպէս մի սատկող հրէշ, իր օրհասական ցնցումներով ծծում է անզօր կամ յիմար զոհերի արիւնը, քամում է նրանց կենսական ուժերի վերջին մնացորդները՝ իր փող մարմինը կազդուրելու համար: Մի երրորդ տեղ, ուր յարստեւ, կարմիր սարսափի ենթակայ հայը ընդունակ է գլուխը կորցրած ոչխարի պէս՝ թէկուզ անդունդը նետուել, նա

ստիպում է այդ բաղձաչարքար վատաբախտին թողնել իր հայրերի ծով արիւնով ու քրտինքով ոռոգւած երկիրը, իր սեփական տուն ու տեղը, իր անթիւ վշտերի ու ցնծութեան վկայ նւերական յարկը կամ դարերի սրբազործւած աւանդութիւնները: Իսկ այնտեղ ուր հայը իրեն պաշտպանելու դեռ սիրան ու խելքն ունի, ուր տաճիկը դեռ համոզւած չէ նրա անբուժելի ստրկահոգութեան մէջ—այնտեղ նա զօրանոցներ է շինում, որպէսզի ժամանակի ընթացքում՝ ջնջէ հայ տարրի մէջ նրա յոյսերի վերջին նշոյլներն անգամ... Այդպէս վարւեց նա Ջէլթունի հետ: այդպէս ուղեց վարւել և Սասունի հետ:

Աւ չդիմացաւ Սասունը, աշխատասէր, տոկուն, սակաւապետ, բայց աւանդապահ և իր հացին ու պատւին տէրը միշտ լինել ցանկացող քաջարի Սասունը...

Եւ երբ մենք պատկերացնում ենք այսօր մեծ փտանգի ենթարկւած Սասունը իր ամբողջութեամբ, իր բոլոր հսկայական հասակով և ներքին կորովով, մի սոսկալի դաւնութիւն է, որ տիրում է մեզ...

Ահա վայրենի Շատախը, այդ հարջ-գազանների երկիրը, իր 15-ի չափ զուտ հայաբնակ գիւղերով, իր հաշակաւոր, անառիկ Գելիեգուզանով և ամբողջ հովտի վրայ իշխող Անտօք լեռնով: Հայերը այդտեղ սովոր չեն հեշտութեամբ երես դարձնել թշնամուց, բոլոր այդ գիւղերի ուէսները փտանգի ժամանակ սիրով ենթարկւում են Գելիեգուզանի ուէսին, իսկ Անտօքի դիրքերին դեռ չէ համարձակւել ժտենալ թշնամին...

Ահա ձեզ անմամն Գալլօրիկը, Սասունի երուն սիրտը, իր 20-ի չափ զուտ հայաբնակ գիւղերով իր Մշոյ սուրբ Կարապետի լեռնով, իր «սատանի մազ» յայտնի կամուրջով, որ միակ և փտանգաւոր անցքն է Մշոյ դաշտից դէպի Դալօրիկի ձորը, և իր կեարծնական նոցնանուն գիւղով: ՔրՔր-Բարը նոյնպէս այդտեղ է և՛ ինչպէս համաճարեղ ձեռքերով շինւած մի բերդ, միշտ անսասան, միշտ անմատչելի, հովանաւորում է Դալօրիկը դարերից իվեր:

Ահա Վերին Գալլուքը 13 գիւղերում ցրւած, իր արիասիրտ բնակիչներով և բըլբըցի կոչող քիւրդ-մի ցեղով, որ իր ծագումը կրում է Պահլաւունի հայ նախարարներից, խօսում է հայերէն աւելի լաւ քան քրդերէն, յարգում է հայկական սրբութիւնները և դեռ երէկ այնչափ մօտ չէր բուն քրդերին, որքան հայե-

Ահա հարուստ Խ ա ր դ ա ն ք ը իր 14 գիւղերով, որոնցից աւելի քան 10-ի բնակիչները զուտ հայեր են, սկիզբ սկսած հար, թիւրքերից անկախ և կապած նոյն բարբառների հետ: Ահա արեւմուտքում Խ ի ա ն ի և Խ ա լ չ ի ղ ղ աւառները իրենց տնտեսւոր գիւղերով, որոնցից մի քանիսը ունեն աւելի քան 200 և նոյնիսկ 300 տու՜ իրենց դպրոցներով, եկեղեցիներով և քահանայներով...

Եւ այդ բարբի վրայ իշխում է սասունցու ընդհանուր հոյակապ նկարագրերը:

Կապած իր բնուստ, անթիւ ժայռերով, ձորերով և կիրճերով Կանկան երկրի հետ, նա ժայռերի վրայ այգիներ է բուսեցրել, քարոտ սարալանջերում բարեբեր արտեր է մշակել, վիթխարի ձորերում հոտեր է ածեցրել, մարգագետիններում մեղր է հաւաքել, նոյնիսկ վարկի թփերից երկնքի մանանան է ժողովել և ոչ մի ժամանակ չէ գայթակղել ոչ գաղթականութեան, ոչ այլ հասանքներով: Քաջ և անստասէր, իրենց ապահովութիւնը և նահապետական խաղաղ կեանքը միմիայն իրենց բազուկների վրայ հիմնած, սասունցիք մինչև վերջերս էլ, երկրասարդ թէ հասակաւոր, տոն օրերին խմբերի բաժանած՝ սովորութիւն ունեին վարժել պատերազմական փորձերում և փոխադարձ յարձակումներում: Զէնքի երկրպագուներ սասունցիք եղել են միշտ, և Գալուօրիկի չորդենց սարը, որ հարուստ է երկաթով, առաջ է բերել բազմաթիւ երկաթագործներ, որոնց ամենասիրելի գործը «չէշխանայ» հրացաններ պատրաստելն է: Ընդդէմ տեղի դիրքին և ազգաբնակչութեան քաջութեան՝ Սասունի հպատակութիւնը առնկին համարնա միայն անւտնական էր մինչ 1885 թիւրք, երբ նա խլեց Վանի կուսակալութիւնից և միացրեց նոր սահմանւած Բիթլիսի նահանգին: Որքան անգամ է սասունցին մինչ այդ օրերը դիմադրել հարկերի պահանջին և իր վրայ գնացած զօրքերին խալաւ յետ մղել: Սակայն 1885, նոյնիսկ 1894 թիւրք յետոյ էլ Սասունը դեռ չէր մտել կատարելով վարչական հպատակութեան շրջանը: Ինչպէս, ընտրւած գաւառակի ազգաբնակչութիւնից — ահա սասունցու միակ իշխանաւորը, նրա վեճերը լուծողը, նրանից հարկ հաւաքողը, նրա ապահովութեան վրայ հոգացողը, վերջապէս թշնամու դէմ նրան դուրս բերողը...

Եւ ահա այս օրհնեալ անկիւնն է, որ այժմ Վանից ու Բիթլիսից ժողոված բազմաթիւ զօրքերով՝ միացրած քիւրդ փիշախից ցեղերի և համրիկների հետ, թիւրք կառավարութիւնը ոտի տակ է տալիս...

Կեւտ է սակայն երևակայել թէ ի՞նչ սքանչելի ճակատամարտեր, ի՞նչ հերոսական ընդհարումներ, ի՞նչ արբեցուցիչ կռիւներ և երկարատեւ դիմադրութիւն կարող էր ցոյց տալ այդ քաջարի երկիրը իր հազարաւոր անվեհեր կորիճներով, եթէ ժամանակին մի փոքր

աւելի սրտով վերաբերէր նրան հայ հասարակութիւնը, հայ բուրժուազիան և նրա ապօրինի գաւակ հայ ինտելիգենցիան՝ օր առաջ լսելով մեր ընդհանուր ազգային պահանջների մարմնացում — անկեղծ և համուզած հայ յեղափոխականների բարձրաձայն և անդադրում կոչը՝ «դէ՛նք, դէ՛նք հայ ժողովրդին», «կո՛րէ՛, կո՛րէ՛ թշնամու դէ՛մ»: Բայց մեծ է մեր մէջ պատմութիւնից պատաստած հրեշաւոր չարիքը, ահռելի է մեր բուրժուազիայի և թրքացած ինտելիգենցիայի սարկամտութիւնը ու անխղճութիւնը... Վաշխառուական բնագրների գարշելի մի թագաւորութիւն է դա, որը զօհուողներից և զօհողութիւնից միայն փախչել գիտէ: սպանիչ ցրտութեան մի ամուլ անապատ է դա, որի ցուրտ մթնոլորտում տեղնուտեղը սառչում են արեան և արտասուքի ամբողջ ծովեր...

Եւ ահա Սասունը փշուելու վրայ է...

Եւ նա կարող է փշուել: Պայմանները նպաստաւոր են դրա համար: Սասունը դեռ չէ բուժել 94-ի հարւածներից — նրա վերքերը դեռ մտում են Սասունը տեսու և սովի շրջան — թշուառութեան սև օրերը այնտեղ դեռ չեն վերացել: սասունցու հետ թիւրք այսօր թշնամացրել է նրա բարեկամ քրդերին — նրանց հետ հայը հիմա «դիմադրական» է. եւրօպական պետութիւնների հովանաւորութեան նշանակութիւնը արատաւորեց հայկական կոտորածներով թիւրք կառավարութիւնը այլևս չէ դողում միջամտութեան ուրականից, ինչպէս առաջ կուող հայ տարրը իր հերոսական պայքարի մէջ մենակ է, թողնւած հայութեան ապահով մասերից, դաւաճանւած իր հարազատ եղբայրներից — սրանց մէջ կան նոյնիսկ այնպիսիք, որոնց շատերի անարգ ձակատար արժանի է սուլթան Համիդի գարշելի համբոյրին...

Բայց չկորցնենք մեր սառնասրտութիւնը: Պատմութեան աւերիչ անիւր մեր հայրենիքում շատ շտապ է շարժուում, որպէսզի մենք մի ըստէ անգամ տարւենք վհատեցուցիչ մտածումներով և յետ մնանք կեանքի արագ ընթացքից:

Դեռ ևս մեզ պակասում են Սասունի դէպքերի մասին ճշգրիտ մանրամասներ: Մենք չգիտենք, ինչ՝ վիճակի մէջ է այժմ խնդիրը, ինչ բնաւորութիւն են ընդունել դէպքերը: Զգիտենք նաև, թէ որ աստիճան խորը կը լինի հայկական այս նոր դրամայի պատճառած ցրեցուժը դրսի աշխարհում: Սասունը իր առաջին որոտաղաղակով հիմն դրեց Մայիսեան ծրագրին: Արդե՞օք նրան է վիճակւած և այդ ծրագրի գործադրել տալը, թէ վճռել է նա թէկուզ ոչնչանալ, բայց չհաշտւել եւրօպական անտարբերութեան հետ...

Ինչ և լինի, ահա սակայն այն նշանաւոր դասը, որ բոլոր դէպքերում էլ պէտք է տայ մեզ Սասունի և Մշոյ ամբողջ դաշտի ներկայ տազնապը:

Այսօրւայ մուլ փաստերի հանդէպ՝ հարկւր և

մեկերորդը անգամ մենք պարզուժ պէտք է տեսնենք այն հշարտութիւնը, որ իրերը ունեն իրենց յատուկ օրէնքները և չեն ընթանում ոչ «պատրաստողականութեան» չեքք դեղագիրներով, ոչ երկայն ու բարակ, բայց միշտ տխուր ծրագիրներով: Թողովորդի առողջ մասերը, որոնք մեր «հանդարտակեանքների» պէս չեն խօսում, այլ ապրում են — և ապրում են շատ որոշ պայմաններում — ստիպած են ճանաչել իրենց խելոգող պայմանների բոլոր հոգեհոսն ծանրութիւնը և գիտեն ինչ անել ու անում են: Թողովորդից ուրեմն դատապարտած են յետ մնալու ոչ միայն մեր բոլոր «սրտացաւ» փարիսեցիները, անասնացած մեծ ու փոքր բուրժուազիան և բազմաթիւ «խոհմա՞ դեկավարները», այլ և նրանք, որոնք, շնայելով իրենց համակրելի «անխոհմութեան», որեւէ պատճառով դանդաղում են: Թանջող Ժողովորդի կողքին գտնել օր առաջ և նրա ցաւերով ապրել: Այո, Ժողովուրդը շարունակ կուի մեջ է, Ժողովուրդը մեզ գնից առաջ է, և մենք ենք, որ պիտի հետևենք նրան, շտապենք նրան օգնութեան հասնել, վազենք ամրապնդել նրա շարքերը և ոչ թէ յանուն այլևայլ ծրագիրների՝ շարունակ պտտենք նրա շուրջը՝ բեռնաւորուած նրան սպասեցնել ապու իզուր ցնորքներով: Ապա թէ ոչ օրէօր պիտի կրկնուի միևնոյնը. մինչ մենք կը տատանենք և կը դանդաղենք, Ժողովուրդը մի օր այստեղ միւս օր մի ուրիշ տեղ, մղած թշնամու անդադրում և ըստ Ժամանակի ու ձևի աննախատեսանելի հարւածներէց, սրտակտուր հառաչանքներով հանգերձ՝ պիտի նետուի թշնամու սրի դէմ, և մենք, «նրա ցաւերով ապրողներս», պիտի մնանք լոկ թշուառ հանդիսատեսներ նրա անօրինակ մարտիրոսութիւններին, պիտի ուշանանք նրա բողոքներին միանալու, ինչպէս ուշացան «փեսային» դիմաւորել ուզող «յիմարները»:

Մեզ պակասում են միջոցներ, շէշանանքով և առանց պաշարի դժուար է Ժողովորդի համար երկարատե կռիւներ մղել. — այո, այդ ճիշդ է: Բայց նախ տանք այն քիչը, որ կարող ենք և մեզինք է կախած տալ միևնոյն է, մեզ չեն սպասում ոչ թշնամին, ոչ Ժողովուրդը, և այն, ինչ մենք կը տանք, միայն կաւերացնի երկրի դիմադրական ուժը, հետևաբար նաև մեր բողոքի նշանակութիւնը: Եւ յետոյ միթէ մենք — յեղափոխական աշխարհայեացքով ոգևորուած տարրերս, լցած թշնամու դէմ կուեղու անյապ ծարաւով և պատրաստ մեր կուի յաջողութեանը ծառայելու ամէն միջոցներով — քիչ ենք:

Մեր քանակը թող լինի մեր ուժը: Օգուանք այդ ուժից, գործ դնենք դրան առանց յապաղումների, և մեր առաջ չպիտի դիմանայ նաև միջոցների պահանջը...

Մ Ր Ր Կ Ա Ղ Ա Ի Ը

(ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿՄԻՆ)

Փրփրակոծ ծովուն վրայ հոյժը ամպեր կը դիզէ: Ամպերուն ու ծովուն միջև մրդկահաւը հպարտօրէն կը սաւառնի՝ սև կայծակի մը պէս:

Մերթ իր թևերով այլքներուն խփելով մերթ նետի մը պէս դէպի ամպերը սլանալով կը ճչէ ան, — և ամպերը թռչունին յանդուգն աղօղակին մէջ հրճանք կը լսեն:

Այդ ճիչին մէջ մրդկի ծարաւը կար: Զայրոյթի ուժ, կիրքի բոց, վստահութիւն դէպի յաղթանակը կը լսեն ամպերը այդ աղօղակին մէջ:

Որոքները կը տքան փոթորիկին առջև, իրար կանցնին ծովուն վրայ և պատրաստ են անոր յատակին մէջ թաքցնել իրենց սարսափը մրդկէն:

Վայրի բազերն ալ կ'ողբաձայնեն: Անոնք — աղ բարերը — անընդունակ են կեանքի կուով գինովալու: Անոնց սիրտը դող կելէ ամպերու գոռումէն:

Տխմար վայրի սագը վախվեցնելով իր գէր մարմինը քարաժայռերուն մէջ կը պահէ: Մինակ խրոխտ մրդկահաւը կը թռչի, կը ճախրէ ազատ ու համարձակ փրփրադէզ ծովուն վրայ:

Աւելի ու աւելի մոայլ և աւելի ցած ամպերը կ'իջնեն ծովուն վրայ, և ալիքները կ'երգեն ու կը պարեն դէպի վեր, գէպի որոտկայծակը:

Շանթը կ'որոտայ: Զայրոյթէն փրփրած ալիքները կը մոնչնին քամին հետ մարտնչելով:

Ահա քամին պինդ ուժով մը կը գրկէ ալիքներու խորձեր և վայրենի շարութիւնով մը կը խփէ ժայռերուն՝ դմբուխտէ վիթխարի կոյտերը փշուրփոշ ընելով:

Մրդկահաւը կը սաւառնի, ճշելով ինչպէս սեփան կայծակ մը, սուլէնկի մը պէս կը ճղէ ամպերը և իր թևերով ալիքներուն փրփուրը կը կորզէ:

Ահա կ'անցնի ան դեի մը պէս — մրդկի չու, սև դեւ — և կը ծիծաղի ու կը հեկեկայ: . . Ան կը ծիծաղի ամպերուն վրայ, ան ուրախութենէն է, որ կը հեկեկայ:

Ամպրոպի բարկութեան մէջ խորիմաց դեւը շտտոնց է յօգնութիւն կը լսէ, ան հաւատացած է, որ ամպերը չպիտի ծածկեն արեւը, — չէ, չպիտի ծածկեն:

Քամին կ'ողնայ. . . Շանթը կ'որոտայ. . .

Ծովերու անդունդին վրայ, կապոյտ բոցով մը, ամպերու երամներ կը ըռնկին: Ծովը կ'որսայ կայծակներու սրբները և իր խորքին մէջ կը մարէ զանոնք: Կայծակներուն արտացոլումները, կրակէ օձերու պէս, կը գալարէին ծովուն մէջ՝ հոն կ'որսւելով:

Մրդկի: Շուտով պիտի պայթի մրդկը:

\*) Մաքսիմ Գօրկին երիտասարդ ռուս գրողներու շարքին մէջ ամենափայլուն տաղանդներէն մէկը, իսկ իր ուղու-թիւնով անպայման ամենահամակրելիս է: Մտիկ անցնալի մէջ այլևայլ պատճառներով քանի քանի անգամ քանտարկած եւ քստուած է: Վերջերս ալ ռուս ուսանողական եւ բանուորական շարժումներուն արձագանք տուաւ «Մորկանաւ» (Բուրեվիստիկ) իր այլաբանական գրւածով, որի մէկ մասը միայն կը թարգմանուի: Քնայելով իր հիւանդ դրութեան, Գօրկին կրկին քանտարկեցաւ քարաքոս կառավարութեան կողմէ, բայց իր ժողովրդականութեամբ շնորհիւ եւ համակողմանի միջամտութեամբ բանտէն հանելով, վստասող վիճակի մէջ, ըզնցաւ չիւսիսային Գովկաս:

Խիղախ մրրկահասան է, որ հարստորէն կը թեւապարէ կայծակներուն մէջ, բարկաճայթ ծովուն վրայ, առ յաղթութեան մարդարէն է, որ կը կանչէ.

Թող աւելի ուժգին պայթի փոթորիկը:

»Խ Ե Ղ Ճ Ղ Ա Յ Ե Ր«

- Դուք հայ էք:
- Այո՛, հայ եմ:
- Խեղճ հայեր. ձեր հայրենակիցներին, — այսօր կարդացի, — դարձեալ կոտորում են:
- Այո՛, կոտորում են:
- Բայց ինչո՞ւ. ասում են՝ հայերը այնպէս հեզ են, խոնարհ:
- Դուք է հէնց այն պատճառով, որ հեզ են, խոնարհ... Եւ երբ դարձրած ձեր երեսը խօսակցից՝ քայլում էք մտամոլոր, վիրաւոր, լսում էք՝ ինչպէս բոլոր բերանները կրկնում են՝

»Խեղճ հայեր, խեղճ հայեր...«

»Խեղճ հայեր...«

Ահա թէ ինչ վաստակեցինք մեր 300 հազար զոհերուդ, արեան այն գետերով, որոնք ինչպէս դարնան հեղեղ ողողեցին Երկրի ձորերն ու դաշտերը, նահատակների այն լեգէօններով, որոնք մորթեցին աւանց բողբոջի աղբրանքը շթուներին եւ թաղանի դիմաց, ստրուկի վախը ճակատին... «

»Խեղճ հայեր...«

Ահա մեր վաստակը՝ շնորհիւ ոչխարամիտ «քաղաքադիտութեան», որ 25 տարւայ աղբրանքներից և Ցամեայ կոտորածներից յետոյ, փոխանակ վրէժ գոչելու, գերբնական ճիգեր է թափում մորթեցած հայերի դաւակներին և առեանգած քոյրերի եղբայրներին թմրեցնող օրօր կարգալու, վարժեցնելու նրանց ստրական հնազանդութեան, բղխած հայի գրչի ծայրից, պաշտօնական բարեմաղթութիւնների, դրւած պատրիարքների բերանում, և խոհեմ համբերութեան, արանգած յուսահատ ժողովրդին... «

Յիրաւի՛

»Խեղճ հայեր, խեղճ հայեր...«

Հայկական բարձրամակնների ազատագրական հովերով սնած հերոսները, թէև, ճշմարիտ է, փոքրթիւթ, թէև սահմանափակ, չ'անցան, աւանդ, ժողովրդական ոգեւորութեան աշխարհը և ոչ էլ օտար աշխարհներ: Մենք հերոսներ ունեցանք, այո՛. բայց կախաղանի բարձրութիւնից «ազատութիւն» գոչող, կուրծքը ժայռի նման թշնամուն տուող, ժպիտը շթուներին ուժը նետող հերոսը ժողովրդական յոյզերի, աղբիւր՝ չքարձաւ. նրան չձանաչեց ամբոխի աշուղդ, օդայի հեքեթաբանը. երգիչը նրան չ'անմահացրեց, պատանին նրա պատկերով իր սեղանը չ'արդարեց. դմայլանքի, կուսական յոյզերի աւարկայ չ'եղաւ նա հայ օրիորդի համար և ոչ խենթացնող օրինակ՝ հայ երիտասարդին: Մնաց միշտ կիսածանօթ, անժողովրդական, սեփական միայն փոքրթիւթ երպրդներին... «

Խոստովանենք այդ:

Եւ դուք է դա է պատճառը, որ հերոսական գործերի ախիքը չհասաւ Եւրօպայ, չջօշափեց ակննը օտար աղբերի, ուր «Հայաստան» դարձաւ համանիշ «կոտորածի» և ուր «հայը» չի արտասանուում աւանց «խեղճ»-ի, աւանց մուրացկանին վայել կսկծալից բացականչութեան... «

Ամօթ մեզ:

Ստրուկ ենք: Ստրուկ հայրենիքում, ստրուկ օտար երկրներում: Եւ դրօշմած իր ճակատին ստրկութեան կնիքը, հայը պտտում է երկրից երկիր, ցամաքից ցամաք իրբե ճանապարհորդ, ուսանող վաճառական, արտրական, միշտ այդ անունը վրան: Այս նոր դարում մենք միակն ենք, միակ ստրուկ աղբը՝ մահէգական բռնապետութեան առաջ: Ուրիշը չկայ: Եւ չենք էլ զգում, որ մենք ախտ ենք ազատութեան համար, ինչպէս ժանտախտը՝ առողջութեան համար. Ստրուկ բռնութեան թագաւորութեան մէջ, ստրուկ և՛ ազատութեան երկիրներում: Եւ այդ անպայ երջանկութեան մէջ յաճախ երջանիկ ենք, յամօթ հայութեան, երջանիկ, այո՛, որ մեզ խղճում են, որ մեզ կարեկցում, մեզ մեղքանում են... Ազատութիւնը միշտ է կարեկցել ստրուկին: Դա մեր առաքինութիւնը չէ, այլ մեր ամօթը. մեր պարծանքը չէ, այլ մեր անկարութիւնը... «

Եւ ինչո՞վ ինչի՛. համար պարծենանք:

Տւեց հայը իր բազուկը, փողը, իր համակրութիւնը, և Երկիրը չփրկեց:— Երբէք: Լաւագոյն օրերին՝ կարող հայը միայն իր նիսիս համակրութիւնը տւեց, իսկ անաղղ տարիներին՝ իր տրտունջը, դժգոհութիւնը, նոյնիսկ անէծքը: Սասունցու արիւնը, վանեցու վէրքերը, ուրֆացու դիակները՝ կովկասեցի հայի կամ Եւրօպական գաղութների «անձնւիրութեան» ապացոյցը չէ: Բէֆօրմների կարօտ վեց նահանգները արիւն տւեցին: Ի՞նչ տւեցին այդ դժբախտ վայրերից հեռու միլիօնատէր հայերը, որոնց արիւնն ատրաք երակների ապահովութիւնը աներկբայ է, աներկիւղ:

Աղքատ, դատարկ թիրբական դանձարանը փողով ապստամբ քրդերից գնդեր կալմեց, փողով զօրանողներ կանգնեց Այգեստանի կրճըրում, Ձէյթունի գագաթի վրայ, Ցալուրիկի ընջերում, իսկ հարուստ, միլիօնատէր, դրամով զօրեղ հայը չի՛ կարող ո՛չ, չի ուղում, չի էլ մտածում նոյն փողով զէնք տալ կուռղին, հաց՝ հայդուկին, գրիչ՝ պրօպագանդիստին:

Եթէ մի օր, մի դժբախտ օր, Եւրօպան ասէր: «Պատասխանեցէք մեզ, դուք, ո՞վ հայ գրողներ, հայ հոնտորներ, Եւրօպացու դռները մաշող հայ պրօպագանդիստներ. քանի՞ միլիօն են զրել ազատութեան գործի համար ձեր հայրենակիցները, և քանի՞ հոգի են զոհուել ձեր հայրենիքի դաշտերում այն երիտասարդներից, որոնք մեր համալսարանական ամբիօններից ազատութեան դասեր են սուած... «

Ի՞նչ պատասխանենք, հայեր: Վամ կարծում էք միթէ՛, որ մեր ամօթահար կարմրութիւնը կը փրկի ձեր պատիւը... «

Դեռ 20 տարի առաջ Եւրօպան մեզ ասաց. «Արիւն թափեցէք»: Արիւնը թափեց, յորդառատ, անվերջ Սակայն դա այն արիւնը չէ: Դա բռնապետութեան սնունդն էր, նրա ուղածը, նրա կենդանութեան աղբիւրը: Արդարութեան գործը մնաց կիսակատար: Բոնաւորը

արին չուեց: Աշխարհ դեռ չտեսաւ մեր հարածի արդիւնքը, մեր վրէժի պտուղը: Սուլթանը շարունակում է պառկել իր փափուկ անկողնում: Ջէքի փաշան նոր աստիճաններ է ստանում: Բասրին՝ անպատիժ մնացած՝ պատրաստ է վերսկսելու նոր կոտորածներ: Անմեղների արեան դիմաց՝ ոճրագործ ու թիւնը մնաց անպատիժ: Վրէժի տեղ՝ հնչում է լացը: Անձնւիրութեան տեղ՝ փշրանք, — փշրանք փողի, փշրանք ոգևորութեան, փշրանք վրէժի...

«Փշրանքը» հիացմունք, յարգանք չյարուցեց, այլ միայն կարեկցութիւն, ցաւ: Եւ Եւրոպան մնաց ցնցած ոչ թէ հայկական հերոսութիւնն երբ ընկձող նկարագրով, այլ արեան, կոտորածների, մորթիւն գթաբեր լուրերով...

«Խեղճ հայեր»...

«Երբեք հայեր»... կը գոչեն բերաւոր շրթունքներ ծափերի թնդիւնով, երբ դարերի շարքերի միջից իր տոհմնութեամբ յաղթական հայր, փոխանակ մորթիւնը ինչպէս ստորուկ, ինչպէս երկչոտ արարած, կը ցցւի թշնամու հանգէպ իբրև ազատութեան զինւոր, պատրաստ զոհելու ամէն ինչ, ընդունակ հարածին հարած տալու: Մեր կուրի փորքաթիւ, բայց դիւցազնական դիպածները՝ դրա առհաւատչեան են:

Բայց եթէ մենք կը շարունակենք, հանգիստ խղձով, անխռով դէմքով, պատել աշխարհից աշխարհ, ստրկութեան կնիքը մեր ճակատին, աղերսանք բերանին, իբրև զաւակներ շղթայակապ հայրենիքի, երջանիկ, որ օտարը մեզ կարեկցում, խղձում, ցաւակցում է, այն ժամանակ երկրից երկիր, սերունդից սերունդ, գրքից գիրք կը մնայ և կը հնչի Մուրացկին արժանի մի խօսք միայն՝

«Խեղճ հայեր», «Խեղճ հայեր»...

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Վ Ի Ճ Ա Կ Ը**

**Վ Ե Ր Զ Ի Ն Գ Է Պ Գ Ե Բ Ը**

Օգոստոսի 21-ի հետագրից յետոյ մեր ստացած նամակներից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները Սասունում և Մուշում տեղի ունեցած անցքերի մասին:

**Ս Ա Ս Ո Ւ Ն**

4 յուլիս

Բաղէշի կուսակալն ու Ալայի պէլը Բ. Դրան հրահանգներով դեռ տեղա, Մուշ են: Երբեմն Սասնոյ և երբեմն Դաշտի վրայ կը դարձնեն իրենց ուշադրութիւնը ու հարստահարութիւնները: Սասունի բոլոր լեռներու վրայ քիւրդ աշիրէթներ իրենց վրանները հաստատած են: Վանէն, Բաղէշէն զօրքեր եկան: Սասունցիները իրենց դիրքերէն իջեցնելու ծրագրի մը համաձայն, 500-է աւելի կանոնաւոր զօրքով վարպետներ ղոկեցան Սասուն՝ որոշեալ երեք կէտերու վրայ (Շէնիկ, Գեյլիէգուզան և Տալուրիկ) զօրանոցներ շինելու համար:

Սասունցին նկատելով որ կառավարութիւնը հոգ մուտ գործելով, անձայն ու անձուն զիրենք խեղճելու և ուշիկ-ուշիկ շնջելու նպատակ ունի, վերջապէս որոշեց միանգամից կոտորել, սրէ անցնիլ և չթողնել որ այդ ծրագիրը իրականանայ: Հանրագիր մը կնքելով, կանանց միջոցով

խրկեցին Մուշ կուսակալին, գրելով որ — «Եթէ կուզէք մեզ մեր հողին վրայէն գաղթեցնել բերել տէք մեզ մի քանի օտար հիւպատոսներ, որոնց հովանաւորութեան ներքեւ հեռանանք ձեր հողէն: Իսկ եթէ կը ցանկաք զօրանոցներ շինել և մեզ թողնել մեր տեղոյ վրայ, չենք կրնար ընդունիլ, որովհետև մեր աշխատող ձեռքերը մեր կանայք ու աղջիկներ լինելով՝ գիշեր ու ցորեկ դուրսն են, կ'անպատիւն զօրաց կողմէ, և չենք կրնար տանիլ: Վերջապէս այդպիսի ձեռնարկ մը սկսելուն պէս կը կոտորուիք կին ու երեխայով: Երբ ամայացան մեր բնակավայրերը, այն ատեն ինչ կուզէք, զայն ըրէք»:

Կառավարութիւնը կարծես կասեցաւ այդ պատասխանի առջև: Բայց ահա շատ չանցնի, զօրքերի հետ միասին վարպետներ կը խրկին Սասուն՝ յիշեալ զօրանոցներու շինութիւնը սկսելու: Սասունցի կանայք՝ յարձակելով՝ կը շարտեն մէկդի վարպետներու գործիքները և կը սպառնան: Վարպետները կը փախչին ու Մուշ կը վերադառնան:

Խիանցի աշիրէթի ցեղապետ Քեօռ Սըլճն, մտնելով Տալուրիկ կառավարական զօրքերով և աշիրէթի մարդիկներով, 100 ոսկի տուրք կ'առնէ և ետ կը դառնայ: Երկրորդ անգամ Փասուրի (Փոււր) գայմագամին հետ կը վերադառնայ: — «Այս անգամ հարկը տարայ տուրք պահանջելու եկած ենք. կամ պիտի վճարէք, կամ պիտի գաղթէք», կ'ըսէ: Տալուրիկցին չափելով ու կռուելով իր ուժը, կը վճռէ լեռները քաշիլ: Դրութիւնը անսովոր է. Սասունին մեծ վտանգ կը սպառնայ...

**Մ Ո Ւ Շ**

10 յուլիս

Տաճիկ կառավարութեան և իսլամ տարրին վերջին վճռագիրն է՝ կոտորել Մուշ և Սասունը... Ինչու... — Որովհետև Մշոյ և շրջակայքի հայ տարրը աչքի զարնող թիւ մը կը կազմէ, որովհետև 95-ի գաղանային կոտորածին Մուշը համեմատաբար նւազ ջարդ ու մնաս կրեց, որովհետև Մշոյ և Սասնոյ մէջ երբևէմ յեղափոխական շարժումներ ու խլրտումներ կերևին:

Կուրա մու գիւղի յունիս 25-ի ընդհարման առթիւ թէև նախապէս համառօտիւ գրած է, բայց ահա մանրամասնութիւնները: Մեր անմոռանալի հայդուկներէն ՍԵԴԻՍԿ և ՍԱԲՕՍ — բառի բուն նշանակութեամբ աղին, հայրենիքի ազատութեան գործին նիւրած անկեղծ երիտասարդներ — կը գտնուէին Կուրավու գիւղ՝ Առաքելի տան մէջ: Ալայի պէլը դաւաճան Մակարի մատնութեան վրայ հիմնած՝ ցերեկին մօտ 100 ձիաւորներով կը պաշարէ Կուրավու գիւղը: Կը հասնին չաչաններու և քրդերու մեծ բազմութիւն մ'աւելցնելով գիւղը խուզարկել, աւելի ծիշը թալանել: Կարգը կը հասնի Առաքելի տան: Մեր հայդուկները պատրաստ կը սպասեն: Երբ դուռը կը բացուի, կը գոռան. — «Ֆէ-գայի անունը լսած չէք, ձա՞մայ բացէք»: Ամբողջ երկու մասի կը բաժնուի, և մեր հերոսները դուրս կը թռչին: Սերգալը շատ անգամ պատահեր է այսպիսի դժբախտ արկածներու և ընդհարումներու և միշտ ցոյց է տւեր անձնւիրութեան աննման օրինակներ: Վերջապէս այսօր նա կուզայ երկար տարիներու իր աշխատութեան պսակն հիւսելու: Թշնամու կողմէն գետին կը փուրկի երկու ոստիկան — Եոսուֆ չաւուշ ու Ֆէգուլազ (Բթօ մահանւաննալ) — և երկու ուրիշ ալ ծանր վերաւոր



Մեր ընկերները կիյնան դուրան դաշտի մէջ—ոչ գիրք, ոչ ապաստանարան: Կոյր բախտը հոս ալ իր գերը կը խաղայ—կ'աւրւի Սեղարկի մօտինը... Կատաղութեամբ մը գետին կը գարնէ ու կը պոռայ. — «Ահա հրացանիս կտորները. հարիւրաւորներ էք, մի՛ վախնաք, եկէ՛ք սպանեցէք»: Կը քաջախելին վատերը, և գնդակները կարկոտի նման կը տեղան: Մեր հերոսը՝ գոհ սրտով, ժպիտը երեսին, կիյնայ, իսկ Սարօն, այդ թարմ երիտասարդը, առիւծի պէս կուելով՝ կը հասնի Եփրատի եզերքը ու հոն կիյնայ՝ իր արիւնով ներկելով Մուրատ գետի պղտոր ջուրը: Գիւղը կը ցրւի. Առաքելի տունը կը վառեն, և դեռ այսքանով իրենց վայրենի կիքը չի յագնար. կըսպանեն 3 գիւղացի խեղճ հայեր, որոնց դիակներն ալ, իբրև Ֆեդայիի, մեր հերոսների դիակների հետ Մուշ բերելով, կը թաղեն անմահ Գուրգէնի կողքին: Յարգանք անոնց յիշատակին, համբոյր անոնց պաղ հողերուն...

Մշոյ Արտերգ գիւղացի Ըմաւոն և Միսակ անուն երիտասարդներ, ղենքի ծարաւէն բռնուած, մի ուրիշ ախճանցի երիտասարդի հետ չաջաններու և քրդերու մօտ ծառայութեան մտնելով, կը գողնան երեք կանոնաւոր ղենքեր ու կը փախչին: Յուլիս ամսոյ 3-ին կը վերադառնան դէպի գիւղ ու խոտի դէզն մը տակ կը քնանան: Ախճանցի երիտասարդը հաց բերելու համար կիրթայ գիւղ հոն հասնելուն պէս՝ կը ձերբակալի ոստիկաններէ ու քրդերէ: Գնդակով տղան վերաւորելէն ետք՝ կըսկսին ծեծել չարաչար: Տեսնելով որ պիտի սպաննեն ղենքը, տղան կ'ըսէ. «Մի՛ սպաննէք զիս. ցոյց կուտամ ձեզ ֆեդայիներ, և եթէ ինձ Մուշ տանիք, շատ մը գաղտնիքներ կը յայտնեմ»: Ապա ցոյց կուտայ իր երկու ընկերները: Մարդակեր գազանի ուխտեալ ծառաները՝ հասնելով խոտի դէզի մօտ, խոր քնոյ մէջ կըսպաննեն երկու երիտասարդներն ալ, առանց ձայն տալու, առանց խղճահարելու: Ախճանցի երիտասարդը, երբ բերին Մուշ, հարցաքննութեան միջոցին յայտնեց. «Ես ոչինչ չգիտեմ, միայն կեանքս ազատելու համար այդպէս խօսեցայ»: Կը մնայ բանտը:

Ստեղծուած է անանկ դրուածիւն մը, որ իսլամները արդէն իրենց համար ընդօր իրաւունք կը համարին ամէն պատահող հային սպաննել ու անցնիլ: Այնպիսի ընդհանուր սարսափ մը կը տիրէ, որ հայ գիւղացին չի համարձակիր դաշտ իջնել. հունձը հասած է, երկրագործի կենաց ու մահուան օրն է, բայց նա բանտարկուած է իր տան մէջ:

Յունիս 23 Ալի Կլբոն գիւղացի Ասատուրը կը սպանի Գեղձմերցի քրդերէ առանց պատճառի: Յունիս 23 տափիցի հայ մը Մշոյ Կրէ կամուրջը բուած տեղը զօրքերէ սուհնով կը վերաւորւի կողոպտելու նպատակով: Յունիս 27 Մշոյ 2 օրը 2լթօյի Օփօյի տղան դաշտնով կը վերաւոր թիւրքերէ: Յուլիս 4 Յրօնք գիւղ հունձքի մէջ Այօյի Յակօն կըսպաննուի. եղբայրն ալ մահամերձ կը վերաւորւի: Յունիս 4 Հաւատ օրիկ գիւղ երթալով՝ խուճ մը բազրանցի քրդեր կը մտնեն տուն մը, ուր մայր մը իր երկու զաւակներով կը գտնուի: Խեղճ կինը, գատայ (եղով հաց) և կերակուր պատրաստելով, կը հիւրասիրէ երկուղէն: Սակայն հեռանալու ժամանակ կըսպաննեն մայրն իր երկու զաւակաց հետ միասին: Արպիսի՝ քոտմենլի արարք... Տեսէք, բուն վայրենիները ուր կը բնակին:

Յուլիս 5 Զբաղանքի կոտորածներու և անմահ Սերոբի սպանութեան պարագային մեծ դեր խաղացած և պատանշաններու արժանացած Խալիլ աղայի փառաւոր պատիճէն ետքը, անոր եղբորդին Պրահիմը, սասունցի և բազրանցի քրդերու ընկերակցութեամբ, յարձակելով հայ Մ ա ո ն ի կ գիւղի վրայ, կըսպաննեն 6 հայեր, 3 ալ ծանր կը վիրաւորեն ու գիւղը կը կողոպտեն: Գիւղացիք ցիրուցան եղած ու կորուած են. թերևս շատերն ալ սպաննուած: Յունիս 22 Ծխալի գիւղէն 16 տաւար աւար տարւեցաւ յայտնի աւազակապետ Մեյիդի կողմէ: Յունիս 22 Խոշկէլտի (Պուլանըզ) հայ գիւղէն ամբողջ նախիրը աւարի առնուած է: Մանակերտի Տէրք գիւղի նախիրը (150 հատ) հասնանցի աշիրէթի ցեղապետ Ռաքսը կը տանի: Յունիս 8 Մշոյ Փեթար գիւղէն 150 ոչխար աւարի առնուած է բազրանցիներէ: Յունիս 6 Մշոյ Շէխալան գիւղէն 200 ոչխար տարւեցաւ պատըկանցիներէ:

Թողմբողական տղուկ մշեցի յայտնի ձիդայիր աղա թիւրքը, որ կը բնակի Մշոյ Աւազաղբիւր գիւղ բացարձակ բռնութեամբ տիրացած է Ղզլաղաճ, Սընձնօւտ, Աւագաղբիւր և շին գիւղերու վրայ: Սա իր ծառաներով մտնելով պատըքանցի աշիրէթի մէջ, ժողովներ, խորհրդակցութիւններ կը կատարէ, հրահանգելով թէ յարմար առիթ է. «Իջէք և Գաշափ գիւղերը աւերակ դարձուցէք»: Պատըքանցի աշիրէթէն Գառանց Աջօ անուն քիւրդը—որ ԳՅ-ի կոտորածին յայտնի դեր խաղացած էր՝ աւերակ դարձնելով Մակարայեցուց վանքը և կոտորելով հոն գտնուող 4-5 հարիւրէ աւելի հայեր, երիտասարդ, ծեր, կին, աղջիկ, պատանի և երեխայ,—միացած ձեզայիր աղայի ծառայ Խուշի հետ՝ քրդական խառնիճաղանձ բազմութեամբ մը կը յարձակին Ս. Յովհաննու վանքի սեփականութիւնը եղող Տատրոգոմ հայ գիւղի վրայ, ուր կը կը բնակին 10-15 տուն աղքատիկ հայեր, և կը կողոպտեն ու կ'աւերեն ամէն ինչ: Գիշերը հող անցնելով՝ առաւօտեան կը պաշարեն Ս. Յովհաննու վանքը: Վանկանները՝ դռները փակելով՝ կ'ամրանան վանքին մէջ: Քրդերը կ'առաջարկեն դուռը բանալ՝ ըսելով թէ «Մենք վանքը կողոպտելու համար եկած չենք, այլ խուզարկութիւններ կատարելու և ֆեդայիներ գտնելու»: Վանքի տեսուչ և այժմու վանահօր փոխանորդ Հիզնցի Մկրտիչ վարդապետը կը պատասխանէ. «Ձեզի չեմ կրնար դուռը բանալ: Ահա լուր ղոկեր եմ կառավարութեան, եթէ խուզարկելու կամ կոտորելու պէտք կայ, թող գայ կառավարական զօրքը և կատարէ»: Այս պատասխանին առջև, կարծես, քիչ մը կը շարին: Գեռ քրդերը հեռացած չէին վանքէն, երբ վանքի կողմէ կառավարութեան լուր տուող անձնաւորութիւնը կը վերադառնայ: Ահա ինչ է եղբ կառավարութեան պատասխանը. «Այժմս պատրաստի զօրք կամ ոստիկան չկայ, և մենք գիտենք, որ քրդերը այդպիսի ձեռնարկ մը չեն ընէր»...

Այլևս ինչու չկոտորել ինչու՞ չսպաննել ու չոչնչացնել ո՞վ է հարցնողը կամ ո՞վ է պատասխանատուն: Քրդերը կ'իջնեն Ղզլաղաճ: Երբ համախուռմներ կը լինին, հոն Տեսնենք՝ թէ Ղզլաղաճի տրաման ինչպէս կը խաղցի:

Աւագաղբիւր գիւղացի Համբար անուն հայ մը դուրան քշելու ժամանակ գիշերով կըսպաննուի: Սպաննող

ները յայտնի չեն: Այս Համբար՝ ճեղայիր աղայի ծառան էր: Սպաննութիւնը Հայ յեղափոխականների կը վերագրեն: Սէյթանցի աշիրէթէն Դաշէի Մոզիկ անուն քերտը սպաննեց Յ ր օ ն ք գիւղի ուէս Արթինը: Փ ո ղ ա ռ կ ո վ գիւղի ուէս Ռաշայի ոչխարները թալանեցին: Այս պահուս կը լսենք, որ Ծ խ ա վ ու գիւղի տաւարի Հեա՝ Սուլուխի հօտերն ալ քշած են: Տ ա տ ը ո գ ո մ գիւղացի Մըլքէ անուն հայի ոչխարներու մէջ դրացի քըրգերը մտնելով՝ օր կէսօրին հաւնածները կ'ընտրեն և կը տանին:

Աւարաուութեանց, հարստահարութեանց միառմի նկարագրութիւնը կատարել մեզ անկարելի է: Չըգիտենք, թէ ի՞նչեր կը կատարէին Մշոյ դաշտի սահմանի վրայ գրտնուղ գիւղեր ու շրջակայ գաւառներու մէջ: Անոնց դժոխային կեանքն էլ թող երկնից կամարի վրայ նկարէի...

Ասքանը քաջ յայտնի է, որ ամէն հայ, «մահ, մահ» կը կանչէ, բայց կարծես մահն ալ սարսափահար երբեմն հեռու կը փախչի. կարծես, նա ալ չուզեր հայերիս կենաց թելը մի անգամէն կտրել, որպէսզի քամեք թշուառութեան բաժակի մընը, որպէսզի պատմութեան մէջ ապագայ մարդկութեան թողնենք հրէշային և հետաքրքիր նկարագիրներ...

**ՏԵՐՐՈՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՈՒՇՈՒՄ**

7 յուլիս

Մշոյ արդէն իսկ անտանելի վիճակը կրկին ծանրացաւ: Կառավարութիւնը ջանք չի խնայեր մեր բնաջնջուով օր առաջ տօնելու: Քրդերու վճիճակներ ազատ համարձակ իրենց սուրը կը շարժեն Դաշտին մէկ ծայրէն միւսը: Վերջին քանի մը օրերու մէջ պատահած սպանութիւններու թիւը 30-ի կը հասնի: Խասգիւղի մէջ սպանած են 3 հոգի՝ Պետրոս Սահակեան, Կարո Մակարեան և Ամօ Յովսեփեան. Մոկուկը գիւղէն 8 հոգի, Հաջիկ գիւղէն 11, Աբխարինճ գիւղէն 3, Շմակէն 1:

Այս դժոխային կացութեան մէջ ունինք սակայն միթարութիւն մը, որ մեզ վերջնական լքումէ ու բարոյական մահացումէ կը փրկէ: Թշնամին որչափ ամուր կը սեղմէ իր շարքերը մեր շուրջը, մենք ալ այնչափ սերտ կերպով իրարու կը մերձենանք և ընդհանուր ահաբեկ վտանգը փոխադարձ կարեկցութեան ու օգնութեան բնազդները կ'արթնցնէ հայ ժողովուրդին մէջ: Ինչ որ տարիներու ջանքերն ու քարոզութիւնները չէին յաջողած ընել, անխելք կառավարութիւնը կ'ընէ մէկ հարածով՝ շնորհիւ իր ծայրայեղ խստութիւններուն: Սեանքը ալ իր արժէքը կորսնցուց հայուն համար, իսկ բանտ, տանջանք ու կախաղան առաջան վախին տեղ դառն քմծիծաղ մը միայն կը ձևեն իր շրթունքներուն վրայ:

Անմահ Սերոբի մահէն յետոյ՝ պահ մը ոգևորութիւնը տիրեց թիւրքերուն ու քրդերուն մէջ, որոնք կը հատային անզուգական հերոսին հետ մէկտեղ թաղած ըլլալ ամբողջ յեղափոխութիւնը: Սակայն դէպքերը չ'ուշացան ապացուցանելու որ չարաչար սխալած էին: Սերոբի և Սպաղանքի դահիճ Պըշարի Խալիլ աղան տապալելէ ետքը, յեղափոխականի գ ն գ ա կ է հ ա ս ա ւ ն ա և ֆ օ թ ժ ա ն ն ե ն ց Շ է թ ի Փ ա ղ ա յ ի ն, որ երկար տարիներէ իվեր ճշմարիտ Ազգայէլ մը դարձած էր Մշոյ դաշտի հայ գիւղերու գլխուն: Ասոր սպանումը պատրուակ բռնելով կառավարութիւնը 95 հոգի բանտարկեց Մոկուկը գիւղէն:

Սպաննած աղային եղբայրները՝ Նիազի և Ռէշիտ, Առաղ գիւղի դաշտին մէջ չորս հայերու հանդիպելով չորսն ալ մարթինիի գնդակներով սպաննեցին: Սպաննածներն են՝ Կուլնուի Սրգոն, Փարխոյի Մովսէս, իր եղբայրը Սեդրակ և Մշու քաղաքացի Մարտիրոս Պետրոսեան:

Իրենց կատաղութիւնը անմեղ գիւղացիներու վրայ ալ չկրնայով յագեցնել, թիւրքերը ընդհակառակը համոզւեցան, որ խնդիրը սուր կերպարանք պիտի առնէ հետագահեա, և տազնապի մատնւած՝ սկսան աւելի արմատական միջոցներ փնտռել պոռթկացող վրէժխնդրութիւնը խեղդելու համար:

Այս նպատակով տեղիս միւթեսարիՓը արտակարգ ժողով մը գումարեց, ուր հրաւիրած էր թիւրք և քիւրդ բոլոր հզօր շարագործները: Այդ ժողովին հերոսը կը հանդիսանայ պալաքցի աշիրէթի ցեղապետ հաճը Ֆ է թ օ ա ղ ա ն, որու ուղեղին մէջ սակայն բարբարոս բնազդները շատ քիչ տեղ էին թողած խելքին: Այս ցեղապետը զօր տալով իր ամբողջ վայրենի պերճախօսութեան՝ ժողովականներուն կը յայտնէ՝ թէ հայերու անհանդարտութեան միակ պատճառը կառավարութեան անոնց հանդէպ մեղմ ընթացք բռնելն է: Եւ լիազօրութիւն կը պահանջէ բոլոր հայ գիւղերը տակն ու վրայ ընելու, խոստանալով կարճ միջոցի մը մէջ Ֆէդայիներու անունն իսկ ջնջել: ՄիւթեսարիՓը քիւրդ պէյին այս կտորուկ առաջարկին իր կատարեալ համաձայնութիւնը յայտնելով հանդերձ, կը պատասխանէ թէ՛ այդ տեսակ լիազօրութիւն մը սալը իր իրաւասութեան վեր է և պէտք է Պիթլիսի կուսակալին գիմել:

Ասոր վրայ Հաճը Ֆէրօս զինուորներու և ոստիկաններու ջոկատով մը ճամբայ կ'իյնայ Պիթլիս: Սակայն յիմար քիւրդը մտքէն իսկ չէր անցնէր թէ իր վրայ հսկող աչքեր կան: Մուշէն 8 ժամ հեռու Ռափա կոչւած տեղը յանկարծ խուճը մը Ֆէդայիներէ կը պաշարւի և առանց դիմադրութեան ժամանակ ունենալու՝ անձատուր կը ըլլայ: Ֆէդայիները ամբողջ խուճը զե ն ա թ ա փ կ'ը ն են, կը ս պ ա ն ն են ու կ'ան յ ա յ տ ա ն ա ն:

Այս դէպքը բոլորովին ապշեցուց կառավարութիւնը, որ կը տեսնէր թէ՛ մութին մէջ ծրարած իր դաւերն իսկ կ'իմանան հայ դիմադիրները:

Եւ սակայն աւելի ապշեցուցիչ անակնկալ մըն ալ վերապահած էր իրեն:

Վերոյիշեալ տէնօրին տպաւորութիւնը գեռ չպաղած՝ Ֆէդայիներու ձեռքով ս պ ա ն ն ւ ե ց աւ Մշոյ հայութեան էն կատաղի դահիճներէն մէկը՝ Խ ա լ ի լ է Փ է ն տ ի ն: Այս ծիւղը, որ տարիներէ իվեր քաղաքապետի (պէլէտիյէ ըիսի) պաշտօնը կը վարէր, աներեւակայելի ծայրայեղութեան մը հասցուցած էր իր հալածանքները Տարօնի հայութեան դէմ: Խալիլ էֆէնտիի սպանութեան աւետիսը լսելուն, Մշոյ ամբողջ հայութիւնը մէկ բերան օրհնեց Ֆէդայիին պատուհասող բազուկը. իսկ մահմեդական ամբոխն ու կառավարութիւնը սարսափէն խելակորոյս՝ նոր ոճիրներու շարք մը վերսկսան: Գիւղերու մէջ տասնեակ մը խեղճեր սպաննուեցան և Մշոյ բանտերը այս պահուս լի են հարիւրաւոր հայ բանտարկեալներով:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅ-ՄԱԿԵՒՈՒՄԱԿԱՆ ՀԱՅՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐ ԽՈՒՄԲԻ ՄԸ ԿՈՒԻԼ

(ՆԱՄԱՍ ԸՏՈՐՈՒՄ)

Ամսոյ 6-ին Հայ-բուլղար յեղափոխական խումբ մը յարձակում գործեց քաղաքէս քաւորդ ժամ հետո գտնուող Տէրտի Մուսթաֆա պէյի ագարակին վրայ: Խումբը, որ նպատակ ունեցած է Էտիրնէյի վալլին գերի բռնել՝ լուր առած էր որ վալլին նոյն օրը խնջոյքի հրահրած էր յիշեալ ագարակին մէջ:

Այս յանդուգն ձեռնարկին այլևայլ մեկնութիւններ կուտան, բայց հրոստիումքին գլխաւոր նպատակներէն մին եղած է՝ միւշիր-վալլին գերի բռնելով, թիւրք կառավարութենէն իբր փրկանք պահանջել Հայ և մակեդոնացի քանի մը բանտարկեալներու արձակումը:

Գժբախտաբար խումբը կէս ժամ ուշ հասնելով՝ վալլին արդէն բաղաք վերադարձած կը լինի: Յեղափոխականները կը ձերբակալեն ագարակատէր պէյի որդին և կուզեն լեռները հետանալ, բայց անմիջապէս յարձակման մը կենթարկւին: Սակայն՝ պահանջով 3-4 ստտիկան, մէկ միւշաղիմ, քանի մը զինւորներ և 15 ձի, որոնց ետեւ պատսպարած կը կուին եղեր զինւորները, խումբը յառաջ կ'ընթանայ առանց զոհ մը տալու: Կառավարութիւնը իմանալով եղելութիւնը, անմիջապէս բազմութիւ հեծեալ ու հետեակ զինւորներ և մինչև իսկ երկու թնդանօթ կը հանէ՝ խումբը ամբողջովին ձերբակալելու համար:

Ընդհարումը տեղի կ'ունենայ սահմանագլխէն 2 1/2 քիլոմետր հեռու, քարքարուտ տեղ մը: Բոլոր անցքերն ու ճանապարհները արդէն բռնուած լինելով՝ յեղափոխականներուն ուրիշ բան չի մնար ընել, բայց եթէ կատաղի դիմադրութիւն մը: Մինչև իրենց փամփուշտներուն սպառումը մոլեգնաբար կը կուին հարիւրապատիկ աւելի սուար զօրքին դէմ:

Կուրը կըսկսի առաւօտեան ժամը 7 1/2-ին և ամբողջ չորս ժամ կը տևէ:

Ամէնէն առաջ կ'իյնայ յայտնի բուլղար յեղափոխական Սոկոլովը, բարձրահասակ, յաղթանդամ երիտասարդ մը: Ասոր հետ կըսպանւին հայերէն Անտօն, Թէքիրտաղի Օննիկը և Իվան անունով բուլղար մը: Բուլղարահայերէն շատերուն ծանօթ դիւցազն՝ Թաթուլը իր ընկեր Գեորգին հետ քիչ մը հեռուն առանձին դիրք կը բռնեն, խումբին թիկունքը պաշտպանելու համար: Թշնամին, որ յոյս ունէր այդ կէտէն յառաջանալով նեղ օղակի մը մէջ առնել հրոսակները՝ զօրաւոր ընդդիմութեան մը կը հանդիպի այդ երկուքին կողմէ: Տեսնելով որ հեռուէն հրացանաձգութեամբ ոչ մէկ փնաս չեն կրնար հասցնել այդ երկու հսկաներուն, որոնք շեշտակի հարածներով շարունակ զինւորներու ձիերը կը գլորէին՝ հրամանատարը հեծելազօրքին կը հրամայէ դիրքերէն դուրս ելնել և վրայ տալ: Տղաքը հարածները կ'արագացնեն, շատ մը ձիեր ու զինւորներ ալ կը տապալեն, բայց վերջի վերջոյ կ'իյնան վրայ հասնող հեծելազօրքին սուրբերէն: Գերի կը բռնուին երկու հայ և երկու բուլղար, Սլավի Յօնէվ, Խրիստօ, Օննիկ Թորոսեան և Յակօր Կարապետեան, բոլորն ալ ծանր վերաւոր:

Թիւրքերու կորուստը յայտնի չէ: Միայն առաջին ընդհարման մէջ ընկածները քաղաք են փոխադրած:

Իսկ գլխաւոր կուին մէջ ինկած զինւորներուն գիակները հինգ սայլերով զօրանոցները կրեր են: Դեռ մինչև հիմա քաղաքիս զինւորական հիւանդանոցին մէջ կը խնամուին բազմաթիւ վերաւորներ, որոնցմէ օրական երկու երեքը կը մեռնին: Կուրի միջոցին զինւորներու գնդակներէն սպանուած է նոյնպէս գերի բռնուած պէյի որդին:

Յեղափոխականներու կողմէն վերջին կուռղջ եղեր է Թէքիրտաղի Օննիկ Թորոսեանը, որ իւրաքանչիւր ձեռքը մէյմէկ լէվօլքէր բռնած՝ զարմանալի արագութեամբ կրակ է տեղացիեր ալ ու ձախ, զինւորներու գնդակներուն տարափին տակ և այն ժամանակ միայն անձնատուր է եղեր, երբ ուղիղէրի փամփուշտներն ալ սպաներ են:

Կուրը մեծ տպաւորութիւն է ձգեր թէ ազգաբնակութեան և թէ զօրքին վրայ: «Մամըր չտեսնուած կուր էր» կը խոստովանին բոլորը: Նոյնիսկ թիւրք հարիւրապետներու պատմածին նայելով՝ տղաքը կուեր են զարմանալի պաղարիւնութեամբ և ոչ մէկ գնդակ պարապ չեն արձակեր: Նահատակներուն դիակները ինչպէս նաև վերաւորները քաղաք մտցուցին զինւորական մեծ թափօրով: Կատողած զինւորները ըստ իրենց վաղեմի սովորութեան՝ վրէժնին վերաւորներուն վրայ են թափեր, բարբարոսական ծեծի ենթարկելով զանոնք: Ծեծը բանտին մէջ ալ շարունակուած է:

Հարցաքննութիւնը, որ ամբողջ 23 օր տևեց՝ վերջանալու վրայ է հիմա. պատերազմական ատեանին վճիռը դեռ չէ յայտնուած:

Այս առաջին անգամը չէ որ հայ և մակեդոնացի յեղափոխականները ձեռք ձեռքի տուած կուր դաշտը կ'ելնեն: Սակայն առաջին անգամն է, որ անոնց արիւնը իրար կը խառնուի: Առ տարակոյս չկայ, որ Թաթուլներու և Սոկոլովներու միատեղ թափած արիւնը պիտի լինի այն զօրաւոր շ ա ղ ա խ ը, որ անխախտելի կերպով պիտի միացնէ ընդմիջտ հայ և մակեդոնացի ճշմարիտ յեղափոխական տարրերը:

Յարգանք ինկած քաջերու յիջատակին, պատիւ այն հայերուն, որոնք օտար հողի վրայ ևս ցոյց տուին թէ ինչպէս գիտէ կուրի Հայ յեղափոխականը...

ՏԱՃԱՎ-ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՆԱՄԱՍ ՂԱՍՊՈՒՐԱՅԱՆՈՒՄ)

Դեկտեմբեր 1900

Թիւրք կառավարութիւնը իր փորած հորը ինչպիսի վտանգին տակաւ առ տակաւ կը մերձենայ: Հայկական յեղափոխութեան սպառնալից դիրքը զինքը այնպիսի մի սխալի մէջ գայթեցուց, որուն աղետալի հետեանքները արդէն սկսած է զգալ և որոնցմէ խուսափիլ անկարելի է: Այդ քրդական կազմակերպութիւնն է:

Նա փոխանակ միջոցներ ձեռք առնելու քիւրդ՝ այդ խուժուժ և բարբարոս տարրը՝ քաղաքակրթելու և իր տէրութեան ու մարդկութեան օգտակար դարձնելու, տարիներով գրգռեց անոնց վայրենի բնազդը և անոնց հօգիին մէջ ներմուծել ջանաց կրօնական մոլեռանդութիւնը, որ միակ պակասող յատկութիւնն էր զայն բոլորովին վայրենացնելու համար, որպէսզի գործածէ զանոնք ոչ թէ քիւրդէն, այլ տիրող տարրէն ալ աւելի:



քաղաքակիրթ մի ազգի յառաջդիմական ձգտումները զսպելու, արգարութեան ձայնը խեղդելու: Նա սարսափած հայ յեղափոխութեան արհաւիրքներէն, կուրացած ասեղութեան կրքով, իր նիւթապէս և բարոյապէս քայքայման ենթակայ իշխանութեան իբր նեցուկ նոր սիւն մը ստեղծելու փութով՝ իմաստուն և հեռատես քաղաքականութիւն մը բանեցնել կարծեց կազմակերպելով համիդէական գունդերը, զինելով և արտօնութիւններ շուայելով անոնց: Սակայն պէտք է ըսել, թէ իր հեռատեսութեան բացարձակ կարճատեսութիւն լինելն, զոր կանխաւ ամէն բանիբուն անձ գուշակած էր, ինքն ևս կըզգայ այսօր. հակահարածն սկսած է ծայր տալ և արդէն ո՛ւշ է առջէն առնել:

Ով քիչ շատ ժողով ծանօթ է թիւրք և քիւրդ ժողովուրդներու բարք ու վարքին, սովորութիւններուն, նա անշուշտ ցնորք կը համարի՝ թէ կարելի է միութեան և սիրոյ յարատև ու հաստատուն կապ հաստատել այս երևութեան մի, բայց էպէս բոլորովին տարբեր երկու գիղերու միջև: Քիւրդը՝ ազատ և անկեղծ, կոշտ ու վայրենի իր լեռներուն պէս, սովոր աւարառութեան և յափրշտակութեան, հիացող ասպետական դիւցազնութիւններու, անկարելի է որ համակերպի, մանաւանդ ենթարկի թիւրքին, որ իր հարէմին պէս առհասարակ ստրուկ և վաւաշտ, խարդախ և երկշտ, կրօնամոլ ու շահասէր յատկութիւններով սոգորած է և իրեն միակ իտէալ ունի իր կիրքն ու հաճոյքը: Լայրենի և տգէտ քիւրդը, որ ժամանակ մը գործիք դարձաւ և դեռ դարձած է իրեն աւելի ժող և աւելի շահաւէտ տարր մը փձացնելու համար, նա ևս սկսած է զգալ իր սխալը, և իրենց մէկ մասին, զոր անւանել չի ներքեր գաղտնապահութիւնը, հայերու հետ կրկին մերձեցում մը առաջ բերելու համար ըրած փորձերը ուրախառիթ ապացոյցներ են այս կարծիքի հաստատման, և ապահով եմ թէ պիտի լինի օր մը որ այդ գաղափարը ընդհանրանայ մեծամասնութեան մէջ և օգտակար իրականութիւն մը գառնայ:

Սակայն մինչև այդ երանելի օրը՝ այս հեռանկարով որչափ և հաշտ քաղաքականութեան մը հետևիլ ուզենք հայերս անոնց նկատմամբ, դժբախտաբար պէտք է խոստովանիլ՝ թէ պարտաւորած ենք այժմ՝ հակառակ և խոչնդոտ տարր մը նկատել զիրենք մեր գառնի ու տեսնել խժդժութիւններու և աւարառութիւններու շարունակութիւնը, զոր տաճիկ կառավարութիւնը անմտութեամբ դիւրացուց և այսօր իր թուլութեամբ անկարող է արգիլել:

Այն գաղափարը թէ քիւրդը նշասակար և վտանգաւոր տարր մ'է տաճիկ կնատ կառավարութեան համար, մտքերու նոր յեղաշրջում մը յառաջ բերած է, և տեղիս թիւրք քաղաքացի և զինւորական մեծամասնութիւնը արդէն սկսած են անհաշտ աչքով նայիլ համիդիէներուն, մանաւանդ զինւորականները, երբ կը տեսնեն իրենցմէ արհամարած, բոլորովին տգէտ ու զուրկ զինւորական կանոնաւոր կրթութիւնէ քիւրդեր՝ իրենց հաւասար կամ իրենցմէ բարձր պաշտօններու հասած: Իսկ գիւղացի տարրը բոլորովին դժգոհ է, որովհետև իսկ գիւղացի տարրը բոլորովին դժգոհ է, որովհետև իսկ կարգ մը գաւառներու մէջ այժմ ինքն ալ ենթարկւած է հայ գիւղացիի նման քրդական բարբարոսութիւններու: Եւ հայ գիւղացիի նման քրդական բարբարոսութիւններու է հայ գիւղացիի նման քրդական բարբարոսութիւններու: (Աւելորդ չէ ըսել թէ ես անձամբ ակնհայտուր եղած եմ վերջիններու գանգատներուն, երբ անոնք մինչև իսկ իրենցմէ աւելի բարեբախտ կը համարէին հայերն, ըսելով

«Թէ՛, գոնէ ձեզ պաշտպանողներ կան, եւրօպացիներ (?), և ձեր վրէժը լուծողներ, Ֆէդայիներ): Այս գարնան հարիւրաւոր տաճիկ ստորագրութիւններով մի հանրագիր մատուցեցաւ վալիին ուղղակի համիդիէներու դէմ, սակայն խնդիրը շուտ փակեցաւ, անշուշտ օր մը աւելի բորբոքած երևան ելնելու պայմանաւ:

Ծարդ պատմածներէս կը հետևի ուրեմն՝ թէ թիւրք և քիւրդ որչափ իրար գործակից են, սակայն լաւ զգացած են իրար թաքուն դիտաւորութիւններն, ուստի և ներկայ խաղաղ յարաբերութիւնները իրական լինելէ շատ հեռի են: Թիւրքը պիտի շոյէ, գգուէ քրդական փառասիրութիւնը, մինչև յաջողի վերջնականապէս ջնջել հայկական յեղափոխութիւնը. իսկ քիւրդը բարեկամ պիտի մնայ անոր, որչափ թիւրքը հեռի մնայ ոտնձգութիւն ընելէ քրդական աւանդական իրաւունքներու մէջ և զինքն նկատէ կէս-ազատ և շատ տեղեր ալ բոլորովին ազատ աշիրէթներ, ինչ որ է այժմ իրերու կացութիւնը: Սակայն տաճիկական կառավարութեան արժանապատուութեան հարցը, անտեսական շահերն այսպիսով բոլորովին կը վտանգւին: Հայկական կոտորածներէ առաջ մեծաքանակ տուրք մը կանուկէր իբրև աղնամ, բայց այժմ որ գրեթէ հայ գիւղեր բառին բովանդակ նշանակութեամբ դատարկւած են ոչխարներէ և այծերէ, մինչդեռ քիւրդերու հօտերն անհամեմատ աճած, անշուշտ կառավարութիւնը պիտի ուզէր իր պիւտձէի այդ պակասը լրացնելու համար քրդերէ հաւաքել այդ օրինական տուրքը. ուստի մարտին պաշտօնեաներ ցրեցան գաւառները: Խաղաղ քիւրդերն մեծ ընդդիմութիւն չըրին, սակայն բոլոր աշիրէթները հակառակեցան: Քիւրդ և հիւսէին փաշա, որ ամենահաւատարիմ կարծւածներէն է, 5-6,000 զրուս ոչխարի փոխարէն միայն 5-600 ցոյց տուաւ. կառավարութիւնը պահ մը ուզեց ուժի դիմել և Արձկէն 100-ի չափ զօրք ղրկեց. սակայն երբ տեսաւ որ խնդիրը ծանր կերպարանք պիտի ստանայ, անուշիկ կապեց: Այսպէս և ուրիշ աշիրէթներ:

Այս և ասոր նման բազմաթիւ օրինակներ ցոյց կուտան, որ եթէ կառավարութիւնը բունութեան և ուժի դիմէ իր վիհապետական իրաւունքները դործադրել տալու համար, առաջին անգամ ապստամբութեան դրօշը պիտի պարզեն այն քիւրդ պէյերը, որ այսօր յոյսս կայսերական գահոյից՝ իրենց հաւատարմութեան ամենահպատակ յարգանքները կը մատուցանեն և զորս սուլութեանը գրաւած կը կարծէ պաշտօններ և շքանշաններ շուայելով:

Ա Ր Ա Յ Ն Ո Ւ Հ Ո Մ Ի Գ Ի Յ Է Ն

(ՆԱՄԱԿ ԽՈՒՐԱԲՈՒՂՆՍ)

3/16 մայիս 1901

Այն օրէն որ թիւրք վարչագիտութիւնը ուզեց իր սպառնացող անխուսափելի անկումէն զինքը փրկելու համար քիւրդ Պրէտորիան գունդը — համիդիէն — կազմել արդէն իսկ աղէտալի քայլ մը կանուկէր ներքին կարգապահութեան ու խաղաղ զարգացման մասին: Աւազակներու հրոսախումբեր զինել՝ այն ևս իբրև կանոնաւոր բանակ, անոնց ամենաձառ զենքերուն փոխարէն յանձնել

կանոնաւոր հրացան ու ռազմեցի՝ կը նշանակէր անպայման ազատութիւն տալ ոճրագործութեան ու աւարտութեան և օրինաւորապէս վաւերացունել վայրագ բարբարոսներու բոլոր արարքները, քանի որ օսմանեան կառավարութիւնը սկիզբէն մինչև վերջ աննաճ ու վանդալ ցեղ մը ցոյց տուած է քիւրդերը աշխարհի ու եւրօպական դահլիճներուն:

Իհարկէ, առաջները տեսակ մը հպարտ բաւարարութեամբ ընդունեցին այդ ծրագիրը բոլոր թիւրք կարճատես վարչագէտները, արդէն իսկ յաղթական ժպիտով մը նշմարած թէ՛ ծայր տւող հայկական շարժումը իր դէմ՝ սքանչելի հակակշռող մը կունենար. — ու այդ մաքրավէլական խորհուրդը դրեցաւ չորս անիւներու վրայ ու ճամբայ հանեցաւ իր հասցէին: Անկասկած, բիրտ օսմանցին իր դիւային ծիծաղք քրքբաց, երբ հայկական դժօխային կոտորածներու միջոցին համիրիյէն իր վագերային հաւատարմութիւնը այնքան շնորհալիօրէն ցոյց տուաւ իր տիրոջը: Ասիկայ, իրաւ է, յաջողութիւն մըն էր մասամբ, մանաւանդ որ սուլթանը այդ քրդական ասպարին ետև պահուցուեցաւ իր բոլոր դաւաճանի պատասխանատուութեամբը ու ինքզինք պաշտպանեց եւրօպական դիւանագիտութեան դատաստանին առջև: Արեւմտեան այդ ասպարը այնքան վեհանձնօրէն պահպանեց զինքը ճգնաժամային վայրկեանին, ու «կենդանիներու տէրը» խիստ պարտական մնաց այդ նշանին: Աւստի, ինքնին հասկանալի է թէ որքան բազմալի է անոր տւեական մշտնջենաւորութիւնը և որքան յոյս դրած է անոր վրայ դեռ գալիք պատահարներու համար ալ:

Համիրիյէն Պրէտորեան գունդն է, որուն գեղարգներուն վրայ կանգուն մնալ կը կարծէ սուլթանական խարխուլ գահը, արեան համատարած լծի մը մէջէն դուրս տնկուած՝ ահաւոր առկախ դղեակի մը պէս:

Բայց շատ չուշացաւ ժամանակը, ու դէպքերը վրէժխնդիր յաջորդականութեամբ մը եկան ու կուբան համոզելու՝ թէ աւազակներէ պաշտպանուած վարչութիւն մը ինչ անակնկալներ կրնայ պատճառել նոյնիսկ զինքը կազմակերպողներուն ու իր պաշտպաններուն: Յակաւին կը կարծենք թէ ապագայ ողբերգութեան առաջին արարուածն է այս, որուն յաջորդող տեսարանները գաղանիք չին վարժ աչքերուն:

Այսօր Թիւրքիան ծանր արկածի մը առջև կը գտնէ ինքզինքը:

Կուցէ այս պահուստ արարական շարժումը ծանօթ դէպք մըն է արդէն Եւրօպայի համար և ինչդիրը իր խոշոր գեներով ճանչուած առհասարակ, սակայն ներքին վիճակը, ներքին մարդուն գիտցած մանրամասնութիւնները կըրնան աւելի յստակօրէն լուսաբանել իրողութիւնը: Աւելորդ չլայն եղելութիւնը քանի մը խօսքով նախաբանելը:

Հուշակաւոր յեղեղակապետ Իպրահիմ փաշան, որ համիրիյէի գունդին հեղինակաւոր ցեղապետներէն կը ճանչցուի, այժմ ապաստանած է Ղարաբաղի ամրութիւններուն մէջ, որովհետեւ համիրիյէները՝ ասիէ առաջ յարձակում գործելով Զամար արաբ ցեղին վրայ, կաւարեն ընտիր նժոյգներու ջոկիները, որոնց գումարը երևակայելի է թէ բաւականէն աւելի մեծաքօէք կրնայ ըլլալ: Զամարի ցեղապետը Բ. Իրան դիմելով այդ յամիշտականներուն ետ արևիլը ու գոհացում կը պահանջէ: Ատեն կանցնի, ու սպասած պատասխանը հուշանայ զինքը հանգստացնելու: Աւստի, ճարահատած,

երկրորդ հեռագրով մը կիմացնէ Բ. Իրան նորէն՝ թէ իր իրաւունքներն անտեսած ըլլալով, կը ստիպուի անձամբ ձեռք բերել իր գոհացումը: Եւ ահա զինուած արարներու ընդհանուր յառաջխաղացում մը Իպրահիմ փաշայի վրաններուն վրայ, որոնք կը բռնեն Յիգրանակերտի շուրջը: Վըսուի թէ Զամարի ցեղը իր վրասները տեղը բերելէ ետք՝ մեծ բաժին մըն ալ թշնամիէն կողպուտ առած է աւերելով համիրիյէներու շատ մը գիւղեր: Իպրահիմ փաշայ՝ պաշտուած ամէն կողմէ, հազու կը փախի Ղարաճատաղ և իրուղութիւնը հեռագրելով Բ. Իրան ու Երզնկա Իւրդ զօրաբանակի միւշերին՝ իր վիճակին վտանգաւոր հանգամանքը կը պարզէ ու օգնութիւն կը խնդրէ:

Միւշեր փաշան կ'աճապարէ հեռագրել շրջակայ քաղաքները, որպէսզի տրամադրելի բոլոր վաշտերը մեկնին Սևարակ: Անցած շաբթու երկու օրան միջոցին մէջ Խարբերդի վաշտը, իր պէքերը կարգադրելով մեկնեցաւ որոշած տեղը: Կիմանանք՝ թէ Մալաթիայի վաշտը ևս մեկնած է, և այս պահուստ ետ թը վաշտէն աւելի զօրք կը գտնուի Սևարակ՝ սպասողական վիճակի մէջ: Արաբները հասած են մինչև Արեւան-շէհիր ու կը պահանջեն Իպրահիմ փաշայի գրուելը: Ինչպէս կը հաստատեն վստահելի աղբիւրներէ, կառավարութիւնը մեծաքանակ ռազմամթերքի բաշխում՝ ըրած է մօտերս Իպրահիմ փաշայի ու իրեններուն: Ուշագրաւ է այս կէտը, որովհետեւ վաղը այլևս անկարելի է այդ բաշխուած ռազմամթերքը հեղ մըն ալ ետ պահանջել: Կը տեսնէք թէ իմաստուն վարչագէտներ ինչպէս կը դարմանեն հոս ձախողանքները: Վաղը նոյն այդ սուլինը պիտի դառնայ կարելու զինքը հայթայթող ձեռքը:

Ներքին ընդհանուր անիշխանութիւնը, երկրին կործանարար վարչութիւնը այսօր այնքան կատարեալ աւերում մը կը սպասուենայ, որ վիճակի այս գիտակցութիւնը մտածել կուտայ նոյնիսկ ամենայնտին թիւրքին ալ: Ի՞նչ անցած օր պաշտօնական թիւրք անձնաւորութիւն մը կատարեալ իրաւունք կուտար արարի արշաւանքին, բողոքելով ինքն ալ իր կարգին համիրիյէի վայրագութեանց դէմ, որովհետեւ այսօր համիրիյէի շրջանակին մէջ գտնուող բոլոր քաղաքներու առևտրական յարաբերութիւնները իսպառ դադրած են: Արդէն Փոքր-Հայոց բոլոր ներքին քաղաքներու վաճառականական փոխադրութիւնը կարավանային ըլլալով՝ երբ ուղևորին ու ջորեպանին առջև աւազակը կը գոցէ ձամբան, ամէն բան ըմբացած նկատելու է այլևս: Օրինակ, Քիլիկի Մուշ — որ երկու օրուայ ձամբայ մըն է բողոքովին դադրած է երթևեկութիւնը, քրդիցին աւելի դիւրութեամբ կուգայ Խարբերդ հինգ վեց օրուայ ձամբայ առնելով ու չլինար Մուշ երթալ:

Արաբին արշաւանքը արհամարհական դաս մըն է տիրող վարչութեան՝ սորմէ ցնցելու համար թէ ինչպէս կարելի է սահմանաւորել սանձարձակ ու անպատկառ դողերու մարմին մը, և թէ արգարութիւնը որքան անվիճելի պայման մը պէտք է նկատուի հսկելու իրաւունքը վայելող ուժի մը կողմէ:

Այս ամենուն հետ սակայն անհանգիստ ու ծանրաբեկ մտածում մը կը շեշտուի թիւրքերէն դէպի արաբական այս անսպասելի յամիրիյէնութիւնը, և վերին վարչութեան ցոյց տուած փութիկոտ իրարանցումը, զինուորական համախառնումը ալ աւելի կը հաստատեն ենթա-

դրութիւնները՝ թէ անգլիական թելագրութեան մը արդիւնք են այս ամէնը: Խալիֆայական փոխանորդութիւնը, որ ցեղապէս և իրաւունքի տեսակէտով այնքան օրինաւոր փոխանցում մը պիտի ըլլար արաբին համար, պիտի ստեղծէր նաև տեսակ մը ինքնիշխանութիւն ալ Անգլիոյ թեւաբարութեան տակ ու պիտի ապահովէր այս վերջինին Հնդկաստանի հռչակաւոր ուղին: Ահա թէ ի՞նչ է, որ մտահոգութեան ու ներքին սարսափի կը մատնէ թիւրք խորհողը: Աւ այդ անորոշ երկիւղն է նորէն, որ շրջելով խուժանին մէջ ալ, կը նորոգէ Հրէաստանի գերութեան օրերուն գուշակութիւնները, վեճերը: Ընդհարու, մոլլաներու հանգիպեցայ, որ կ'ըսէին.

— Արդէն գիրքը մօտ կը ցուցնէ վերջին օրերը. աւե-

րումը հարաւէն, Արաբիայէն պիտի գայ ու խալիֆային գուշակութիւնները պիտի իրագործւին:

Ար գրեմ՝ այս ամէնը երևան բերելու համար այն ընդհանուր վրդովումը, դժգոհութիւնը ու տագնապը, որ կը տիրէ ամէն տեղ Թիւրքիայի մէջ: Թիւրք խուժանը երբէք գիտակից չըլլալով իրերու սկզբունքներն ու վախճանական իմաստասիրութեանը, զինքը ճնշող տպաւորութիւնը այլապէս կրօնի հրաշալիքովը կը մեկնէ:

Միայն ճշմարտան այն է, թէ բոլոր բերանները կը գանգատին. հոգ չէ՛ թէ այդ գանգատը այլազան եղանակով կ'արտայայտուի. թիւրքը գ ու շ ա կ ո լ թ ե ա մ բ, հայը ա ը ի լ ն ո վ և արաբը զ է ն ք ո վ կը յայտնէ զայն — ահա միակ տարբերութիւնը...

Կ Ե Ն Մ Ա Փ Ր Ա Կ Ա Ն

**ՅԱԿՈՒՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ**  
(ՀԱՐՏՍԱՐ, ՄՈՒՐԱՏ-ԽԱՆ)

Սալոյ Չոր կրկին ցաւալի կորուստ մը ունեցաւ քաջարի Յակոբի նահատակութեամբ: Այդ երկիրը հակառակ տաճիկ կառավարութեան բարբարոս և խժոժալի հալածանքներուն, միշտ ունեցաւ իր քաջարի զաւակները, որոնք դիւցազնական կռիւններով հայ յեղափոխութեան վարկը միշտ բարձր պահեցին և սեղական ժողովրդեան ամէն խաւերու մէջ յեղափոխական գաղափարը տարածեցին: Յակոբ մինն էր այդ հերոսներէն, և երբ մանրամասն աչքի առ ջն բերի իր յեղափոխութեան համար քրտած ծառայութիւններն ու զոհողութիւններն, իր 45 տարեկան հասակին մէջ յեղափոխական խանդն ու աւելնը, չէ կարելի յարգանքով չի յիշել իր անունը և չգասել զինքը այն ազնիւ անձերու կարգը, որոնք ժողովրդեան ծոցէն կ'ելնեն, անոր ծոցին մէջ կ'ապրին և հոն կը զօհեն իրենց կեանքը՝ իրենց նամուսը պաշտպանելու և իրենց ազգը ազատելու միակ սևեռուն գաղափարով, աւանդ ուսման և գիտութեան նշույն իսկ ունենալու:

Աւելը տարիներէ ի վեր Յակոբ կը գործէր հայ յեղափոխական Պաշտպանութեան կրօնակին տակ, թէ զինուոր էր, թէ սուբհանդան և թէ կազմակերպուց: Ուսման կուսակցութեան մէջ էր իր անունը նշուածը:

Յակոբն էր որ ուղեորական պարկը շալակը, բռնաւորած թերթերով և նամակներով՝ առանձինն կը վազէր հոս և հոն և յուսահատ ժողովրդեան յոյս ու հաւատք կը ներշնչէր: Բաղէշէն-Վարին, Վարինէն-Բագրևանդ, Ցարեն, Խնուս, սահմանի կոմիտէներ ամէնքը զինքը կը ճանչնային և կը գնահատէին իրրև անձնուրաց թանկագին ընկեր:

1897-ին իր խնամապետութեամբ 66 հայուկներով անցաւ Խլաթ և հոն նեմրութի գլուխը յանձնեց զէնքերն Աղբիւրի և Գուրգէնի նոյն լուսին ներկայ եղող ընկեր զինուորներն մինչև հիմա իսկ եռանդալիբ խանգաղատանքով կը յիշեն հայկական այդ զինահանգէնն, ուր Յակոբ և Աղբիւրի այդ երկու հօրեղբորդիներու խումբերն, Գուրգէնի խումբին հետ հրացանի օրոտներով զիւար սղոճնեցին և ընկերական տաք համարյներով զերթը սղջագործեցին:

1898-ին դարձեալ Յակոբն էր, որ 66 զինուորներով անցաւ նոյն գծով և Պրոշակի համարները կարգադրեցին անշուշտ կը յիշեն այն դիւցազնական կռիւլը, զոր միջոց այդ խումբը՝ Այնթափի դաշտէն մինչև Խլաթ, չէ աւարտար հոս կորսնցուց իր միակ եղբայրը և պատերազմի տաք միջոցին իր այդ կորուստով կ'ազատէր իր ընկերները՝ չլիտնալ մեռնելէ և կուրիլ ցմահ:

ԹԹ-էն վերը նա մնաց Խլաթ: Բոլոր ժողովուրդը զինքը կը սիրէր և կը յարգէր: Աղբիւրի մահէն վաղ մը ընկնող զինքը, սակայն յեղափոխական գաղափարով ուղևորած Մուրադ Խանի անկողնէն էր որ վախճար իր թանկ սիրտը:



Ինչպէս որ յիշուած է վերևը, Յակոբն ունէր միակ եղբայրը՝ Արտուրը, որ իր անունը նշուած էր իր անունով իր անունով:

այն ներքին շարիքները, որ գործի յառաջացման արգելք կը լինէին: Ահա այդ թափին մէջ էր որ նոյեմբերին Զրհոր գիւղը, առանձինն պաշարուած քիւրդերու և զինուորներու վճռակէ մը, մեռաւ իբրև քաջ հայրուկ՝ 4 զինուոր սպաննելէ վերջ:

Աղբիւրի ընտանիքը Յակոբի մահով տօնեց Աղբիւրի, անոր եղբայր ուս Մխոյի և Աղբիւրի որդի Յակոբի նահատակութեան տարեդարձը: Ահա ընտանիք մը արժանի ամէն յարգանքի և պաշտաման: Երանի՛ այդ ընտանիքի մայրերուն, որ այդպիսի հերոսներ կը ծնին, և փառք այն ժողովուրդեան, որ այսպիսի ընտանիքներ կը սնուցանէ իր ծոցին մէջ:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ե Ռ Ի Ր Ը Ը**

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՆ ԹԻՒՐԿԻԱՆ.— Սուլթան համդի թագաւորութիւնը — Թիւրքիա շիւս որովհետեւ — կը նմանի թագաւորի մը, ուր միշտ պէտք է թընել: Ոչ մէկ մարդութիւն կայ, ոչ մէկ սրբութիւն — անվերջ զազանութիւն, անմայրածիր թշուառութիւն, ահռելի անառակամտ մը, որու մասին քիչ թէ շատ բարոյական զգացումի համը առած անհատ մը չի կրնար պզտկանք չունենալ: Եթէ բարոյականութիւնը մարմին անէր աշխարհի մէջ եւ հրամայէր տիեզերքի ծակատազրին, սամոսի քար մը կանցնէր Թիւրքիոյ վիզը ու շանլէշ մը պէս կը նետէր ծովերուն անդունդը. պէտք է որ արդարութեան բազուկը ծանր զայ համարական եւ ընթիմ՝ եղած աններելի շարագործութեան մը վրայ, անարգած խիղճները եւ գոհերուն ուրախանները հանգստացնելու համար:

Թիւրքիան, բարոյական եւ քաղաքական օրէնքով, պէտք է դուրս նետել պետութիւններու ոլորտէն, զի հոն ոչ մէկ բան կայ, որ բարեխօսէ եւ ցոյց տայ պետութեան մը կարգուսարքը, օրինակութիւնը, իր երկրին հոգածութիւնը, օրէնք ու արդարութիւնը: Մանկացած ամէն տեսակէտով, բարբարոս եւ արհիւարբան, մոխիրի վրայ շատած ժողովուրդ մը, նիդրէի պէս լացող անմիջօրէն մայրեր, ցոփ, գող եւ մարդասպան փատիշահ ու նախարարներ, — ասի այն հաշիւը, որ կուտայ քաններորդ դարու սկիզբը օսմանս որդնտամ եւ գոգոտ կայսրութիւնը, որ ցոյց տուաւ միջազգային իր բացարձակ անընդունաւորութիւնը:

Սարսափելի հարստահարութիւններ տուրքերու համար, ժողովուրդի յուսահատ եւ խղճալի դրութիւն, հալածանքներ, երթնելութիւններու խափանում միմիայն հայերու համար, չլինած անզրոյթութիւններ, ցայեքսասն իշխանութիւններ, բացարձակ անապահովութիւն, որ այդ շարատանը եւ դժբախտ ժողովուրդին եւ տըրաշարի իր արհաւիրքը կուտայ: Զկաւ իշխմանը, երկրին եղած հարստութիւնը բոլոր սուլթանի անմահական գանձը կը թափի — ամէն ծամբայ չոտ կը դիմէ — որ կը մտուցանէ երկրին անբարոյականութիւնը եւ ապականութիւնը, որ կը փութացնէ երկրին մահը, որ կենդանի եւ փորկուշտ կը պահէ Եւրոպայի զազանանոցը, ուր ժամադիր եղած են կասկածելի մտուցում մարդեր եւ գորս կը հովանաւորեն «գերուհի լակտներ», որոնք չեն ունեցած երբէք «խղճի քննութիւնը» եւ որոնք անունը լսելով չենք զգացած դեռ այն գաղտնի հանցքը, զոր կըզգար Մոմէ-Վէպի. հոռմայեցի կայսեր մը մասին: Ետտ տեղեր մշակութիւնը, վարդաւրդ դարձած, ցամքած ըլլալով աշխատաւոր բազուկները, մայր հողը ամլացած՝ այլեւս հաց չի տար իր գաւառներուն: Կատարեալ անիշխանական դրութիւն կը տիրէ: Այս տիեզերական տազանալին առջեւ մէկ մարդ մը միայն իր պալատին խորը, դողալար շան պէս ծակը մտած, կը մտէ:

«Պետութիւնը եւ ինքս եմ»...

Բիւզանդեան արքունիքներու ժակտի զիւր է այդ, ուր ներքինիքները եւ սէր ալ ընտրել կուտան, կը հատցնեն երկրորդ:

«Ճշմարիտ պետական մարդու մը համար — կըսէ Ֆրանսական թերթ մը — լաւագոյն բոլորն է Թիւրքիոյ այս դրութեան նպատակայարմար ուղղութիւն մը տալով՝ տեսական խաղաղութեան թւական մը բանալու համար եւ ժողովուրդներուն դարձնելու իրենց անկախութիւնը»:

Միշտ է, շատ անգամ ըսած ու խօսած է «հիւանդ մարդուն» թաղման մասին, քայց շահերու թշնամութիւնը ձգած է:

որ շարաշար սատկի այդ հիւանդը, մարդկային պատմութեան ծակընթակի անիւներուն տակ:

Իսրայելի իվեր Գա հրաման օսմանցիները, որոնց վրայէն ալլահի շուքը անպակաս է, իրենց դժբախտութեան պատճառը վերջապէս յաջողած են գտնել: Միւսիւման ընտանիքներուն մէջ օտար ուսուցչուհիներու մուտքն է որ իսլամական առաքինութիւնը կը փճացնէ, երկրին արքանը կ'արէ եւ դէպի վահագնը հնազանդութիւնը կը թուլցնէ: Փատիշահի իրադէն անէ՞ք կը կարգայ այդպիսիներու դէմ, եւ Պօլսոյ թերթերը այդ իրադէնի առթիւ «ժողովուրդի հայր» կ'անուանեն սուլթանը: Խըստասիրտ Կատոմն իսկ պիտի նստմանար օսմանցիներու բարքերու անարատութիւնը եւ ան նախանձանդիկ եւ պալատական գեղեցկութեան մէջ լողացող վեհագեղ մը հրամանին դիմաց: Զէ՛ կարող առաքելի ու տիպար Արիւլ համդը, որ չէ ծանցած սրտի մեծ թոփշներ, ալ մեզի իր «ստամոմսները», իր նոր Արիւլնոս, որ իր մարդկային ամէն գործեր իր «խղճի քննութիւնը» կանցնէր:

Դժբախտ այդ երկիրը, որուն վեհագեղ իր ժողովուրդն հետ կը խաղայ, ինչպէս օձը իր որսին հետ, եւ որուն մեղսակից են թիւրք թուլէջը հրապարակագիտները, որոնք դաւածամտութեամբ կը թոցնեն իրենց փատիշահի բոլոր անօրէնութիւնները, էշութիւնները: Սուլթանը, օ՛հ, անգամ մըն ալ կը փրկէ Թիւրքիան ետ հրելով միւսիւմանները դէպի խաւարի խորը, իր երջանիկ տգիտութեանը մէջ:

Այդ արմատական բարձրորդումէն զատ, որ փրկութեան խաւարիկը պիտի ըլլայ օսմանեան կայսրութեան, այժմ ամէն ժամանակէ աւելի Թիւրքիոյ հիմքը աւագի վրայ կայնած են: Երկրովի փողոցն են որ կը հնչեն Թիւրքիոյ պատերուն տակ:

Մակեդոնիոյ մէջ ամէն օր ընդհարումներ, որոնք նախատեսելի կուտան ապագայի մեծ հրեշտակ: Խոսք մը մակեդոնացի հայրուկներ, որոնք հետ միացած էին վրէժխնդիկ հայեր ալ: Իտէրնէի զազանաբարոյ վալին առեւանգելու փորձին մէջ փառաւոր ընդհարում մը ունեցան թիւրք ամբողջ բանակի մը դէմ, սպանեցին բնաւոր հարուստ պէյի մը, Տէրտիլ Մուսթաֆայի տղան, զոր լեռը հանած էին, եւ անթիւ զինուորներ, իրենցմէ ալ տալով քանի մը զոհեր եւ ձեռքակալածներ: Սեւլանիկի ժող նոր կռիւ մը, ուր օսմանեան զօրքեր ետ մղելէն զատ՝ քանիներ ալ գերի կը բռնէին:

Արեւմտեան, որ կը հայթայթէ օսմանեան բանակին կարեւոր զօրաբաժիններէն մէկը, կը խնդրէ ապագայ աղէտալի շարժումը կը ծոցորի հոն: Պալքանը հրաբուխ ըլլալու կը պատրաստի եւ ցաւալին այն է, որ օսմանեան պետութեան մէջ կացութեան գեղեցկութիւնը տխուր շնչիւնութեան հասած է. ամէն մարդ անհաւեր եւ անզօր կըսպասէ, թէ ինչպէս պիտի ըլլայ այնքոյ կայսրութեան մը նաւաբեկութիւնը:

Արաբիան նմանապէս պարբերաբար կ'ապստամբի. հակախալիֆայական փրօփակաւտ կըլլայ իսլամական աշխարհին մէջ: Հպատակ տարբերուն առեւելքի մէջ արհիւարբան եւ օձի պէս պառ ընթանալու երթալով կը ծովանայ, որ պիտի խեղդէ սուլթանը եւ իրենները:

Գահակալութեան տարեդարձը ժողովուրդին համար սեւ օր մըն է: Այդ առթիւ երեքհարիւր հայ ձեռքակալած ու քանտերը լեղունացած են, վախնալով որ հրամանով եղած Մատուհի շարժում վրայ Պօլսոյ մէջ ցոյցեր կ'ենան պատիշահի: Օրմանեան պատերազմը, — մարդ մը, որ իր յատակը պատրիարքական գահուն վրայ դնելէն իվեր փատիշահական փայլուն երեւակայութիւն ունի — իր փեսին համար, կըսեն, ազգէն... օժիտ կը պատրաստէ: Երէկ բռնայ, այսօր փաշայ:

Այս բոլորը սեւզուծ նշաններ են, թէ սուլթաններու զահը անվերականգնելի է, թէ ան կ'արշաւէ մահաւան ետեւէ, անմասպանութեան ակտէն բռնած խնձի մը պէս: Իր տգիտութեան, անկարողութեան վրէժը կը շանայ մարտ անմոռնորդ արեւան մէջ պիտի ոչնչանայ առանց ծանցած ըլլալու սրտի եւ հոգիի բարոյական շարժումները, առանց վայելած ու տեսած ըլլալու խաղաղութեան ու ազատութեան օրարեւը ու ծիլմանի գօտին:

Օսմանեան միութեան առաքեալները — խեղճ Ռիզա — կըսպասեն բերանին բաց, որ իրենց սուլթանը կեանքներու արեւան մէջ երկրին միութիւնը թրէ:

Սրիկայ սուլթանին արիւնի ծարաւը, վայրագութիւնը միայն հայերով չի գոհանար: Թշուառութեան, մահաւան սարսափը ամէն տեղ է: Այսքան աղէտներէ ետք՝ նիւթապէս եւ բարոյապէս փճացած ժողովուրդին ծոցէն զազաններու սիրտը լեղի պատուով ընող վրէժխնդրութիւն մը չծնաւ դեռ:

Եթէ Թիւրքիան ունենար gentle Brutus — առաքինի Բրուտոս մը...

\* \* \*

ՏՐԱՆՍԱ ԵՆ ԹԻՒՐԿԻԱՆ.— Սրեւքի մէջ Ֆրանսական անունը եւ ազնեցութիւնը կը հիւծի, շորհիւ այն «պատաստական եւ



ձեռնպահ՝ քաղաքակառուցման, որը վերջի ատեններ Ֆրանսական հանրապետութիւնը իրեն դաւանանք ընտրեց միջազգային ինդիւստրիա մէջ, մասնառդարապէս Արեւելքի մէջ, եւ մասնաւորապէս այն անհատական աշխարհային հարոյրակատարութեան, որ ցոյց տուաւ դէպի ուսանական ծառուները եւ փայտայեց սուլթանի քմահարայները: Հինցան այն օրերը, երբ թրքական Արեւելքի մէջ Ֆրանսիայի անունը պատկանելի էր, երբ անոր քաղաքակառուցիչը կը շարունակէր արեւելեան ազգերը՝ երբ Ֆրանսական դեսպանը «ստաշնութիւն» ունէր միւս դեսպաններուն վրայ, երբ Ֆրանսական դոքտրին տակ կը ծամբորդէին Թիւրքիա մտնող շատ վաճառքներ եւ Ֆրանսական քաղաքացիներու տունը անբռնաբարելի էր:

Սուլթանը այսօր արհամարհելի քանակութիւն մը համարած է Ֆրանսան, կը խնայուի աւելի ուժեղներու պաշտպանութեան վրայ: Հայկական ամբողջ շարքերու միջոցին, իր կաշառակեր մամուլը՝ սակաւաթիւ ազնիւ բացառութիւնով՝ ձուկի պէս մունջ մնաց, իսկ կաթոլիկ աշխարհը որբանութեան խելայեղ եղած էր, որ հայերուն դժբախտութիւնը պիտի մէջ գրեց Ս. Գետրոսի Նաւակը նետելի: Դժբախտ Ֆրանսան մեր դժբախտութեան մէջ յիշակէտ մը գտնել երազեց, զորունի միջոցով հայ տարբին թշուառութիւնը գնեւ, զայն կաթոլիկ ընելով, հետեւապէս... Ֆրանսասէր: Ֆրանսական Արեւելքի քիչ շատ ծանօթ հեղինակաւոր անձնակազմութիւններ, ուղղակի կամ անուղղակի, այդ ցաւազար թէօրին ուժ տուողներ էին, առանց խղճին եւ լուրջ նախածեմութեան մը լուսաբանութիւնը բերելու՝ խնդրին մէջ: Սա չափը միայն հասկացած էին, որ հայ տարբը ուժեղ, ձեռնբերեց եւ ծիւռն տարբ մըն է, որ կենայ լաւ աստվորայ մը ըլլալ այն տէրութեան, որուն համակրութիւն ունի, քայց եւեթերին չէր հասնէր հարկաւոր միջոցները եւ կարծես խոյնիսկ լաւ չէին ծանցած հայուն քաւարութիւնը, ազգային նկարագրը: Արդէն Ֆրանսական կառավարութեան մեծագոյն թերութիւնը եւ զարմանալիութիւնը անհետաքրքրօրէն չճանաչու է այն ժողովուրդները, որոնց հետ շահերով կապուած է: Այժմ՝ իր նահանջին մէջ՝ կորակոր նահանջ մը՝ դու ստուգապէս չի գիտեր, թէ ինչ քնական եւ թաղուն պատճառներ Արեւելքի մէջ Ֆրանսայի պարտութեան ողորմելի նշաններն են: Փակցողին արդարացում մը երբեմն կը թուի իրենց բեռնէն, թէ Ֆրանսան՝ որուն «մեծութիւնը աշխարհի յոյսն է», կըսէ Բուզէն՝ իր չափազանց մարդասիրութիւնով ստուծած է. կը մայ ուրեմն իրեն ամէնօրեւ «վերապահիկ քաղաքակառուցման» մը մէջ, աչքի առելու ունենալով միայն Ֆրանսական անմիջական շահերը: Մարդկութիւնը քաղաքավար չէ եղած միշտ միգի», կըսէր վերջերս Ֆրանսայի մեծ թերթ մը: Այս զարպիարը լուծեալ, եթէ ոչ յայտնապէս, Ֆրանսայի քաղաքակառուցման ստաշնորդող մուսաններէն մէկն է:

Եթէ Ֆրանսան, «Առողմոյ օջաւորտ զինուոր»՝ ինչպէս կըսէ Շելլիքը՝ հայերու շարքերուն հարտէպ չափերու մարդկային վեհանքն շարժում մը ունենալ, ելեւմտական եւ դրամատէրներու ընկերութեան մը շահուն համար պատրաստ է սակայն սուլթանը դարձի բերել: Պոլսոյ քարափներու խնդիրն է առ, որ անազն աղուով կը հասնէ եւրոպական մամուլին մէջ եւ կըստպանայ միջնախիւ երկու տէրութեանց միջին դիւանագիտական խզում: Եւ պատերազմի: Սուլթանը անմտօրէն, վերջապէս, պատուած էր Ռոխսեւի հովերուն տիկը:

1890-ին սուլթան շամիլ Ֆրանսական ընկերութեան մը շնորհած էր Պոլսոյ քարափներու, տ օրերու, միջերանցներու եւն շինութեան արտօմութիւնը: Ընկերութիւնը, պայմանագրութեան ուժով, պիտի սեպականէր ծովուն մէջ շահած գետիկը եւ եթէ ուզէր՝ ծախէր իր իր: 40 տարի ետքը, սակայն, թիւր պետութիւնը իրաւունք պիտի ունենար զնի արտօմութիւնը Երկու տարի առաջ՝ քարափներու մէջ մասը միայն լեցած, սուլթանը ընկերութեան իմացուց, որ չարունակեմ այլեւս քարափներու շինութիւնը, զի ինք մտառն է անմիջապէս գնել կառավարութեան հաշտոյ: Ատոր վրայ ամէն տեսակ դժուարութիւններ հանեց ընկերութեան տողն, աղբիւր ըլլալով անոր իր աշխատանքին արդիւնքը շահագործելու, այնպէս որ ընկերութիւնը իր տարիներու աշխատանքին մէջ չուր հեղկած եղաւ միայն:

Սուլթանի այդ ունեւորութիւնները կը բացատրեն անով որ իր թէ քարափները կը դիւրացնեն յանցաւորներու փախուստները եւ երկրին մէջ ուսմբ, գէպերու եւն մուտքը: Այսպիսով պէս եթէ թիւրքերուն ըլլան քարափները, մէկ տարիէն քաղ ու քանը կըլան:

Ֆրանսական դեսպանը ստիպեցաւ միջամտել Ֆրանսական քաղաքացիներու շահերը պաշտպանելու եւ միանգամայն թոյլ տալու որ Ֆրանսական փայտաղէկութիւնը բոլորովին չուր ինչ, փոշիանայ Արեւելքի մէջ:

Դեսպանը, հիմնելով պայմանագրութեան օրէնքին վրայ, երկայնի դրութեան մը մէջ դրաւ սուլթանը՝ կամ գնել քարափները կամ թոյլ տալ որ ընկերութիւնը ազատօրէն իր քրաւունքները գործարէ:

Այս անակ եւ անօթի ըրալէն, Ռապալէի քառամուն, երբ զանձը պարապ կը զգայ, երբ երկրին վրայ ուժեղորոշութիւն չէ մնացած, երբ ծըրքը ցորմը դու չըուսած կերպ հասնողս: Է, դժար է 45 միլիոն Ֆրանք վճարել: Փոխատուութիւն մը միայն կընայ այդ անը կրողինէ դուրս քաշել զայն, քայց այդ երկար ծամանակի կը կարօտի եւ մեծ յոյսի տեղեր ալ չկան:

Պալատը, աղքեղ Թիւրքիոյ, որ կերկրի եղած կը լաւի երկրը, խոյս պատասխաններ տուաւ եւ իվերջոյ անքաղաքավարօրէն չի զիջաւ միջնախիւ «Շէքէր Կոստանի» ծանուցազրին պատասխանել:

Կոստան՝ «Ինչ ծրագրներուն մէջ ուժով եւ յամառով մարդը, ինչպէս կը սերնն ըսել Ֆրանսական թերթերը՝ ունկընդորութիւն խնդրեց սուլթանէն՝ Նորէն լուրիւն: Կարտաւորեցաւ դեսպանը տանց հրաւերի գնալ պալատ, ուր իրեն ըսեցաւ որ «սուլթանին ակնան ցաւելուն» չի կընար ընդունիլ, եւ եթէ կուզէ՝ Բ. Դուրը թող երթայ: Զափէ դուրս այդ անաքաւքին վրայ, դեսպանը Faria francese է ընուսած Ֆրանսայի հանրապետութեան եղած նախապիտըր իսկոյն հեռագրեց Տէլեգրաֆին, սնդելով որ գոհացում պահանջի սուլթանէն:

Այսպիսի շուքը սա լրամբն, տակը բնկածի պէս, լուր դիւց Կոստանին որ պատրաստ է զինքը ընդունիլ, թէ պարզ թիւրիմացութիւն որ եղած է: Տեսակցութեան ատեն Նորէն յայտարարեց որ ինք (սուլթանը), ինչ ալ ըլլայ, պիտի գնէ քարափները, քայց առայժմ ընկերութիւնը կընայ իր իրաւունքները զործարգել, եւ թէ Ֆրանսական ուրիշ քաղաքացիներու պահանջները եւ միւս առկալ հարցերն եւս պիտի կարգադրին: Սուլթանը պատուր կուտար: Զանից մը օր վերջ դրեց խոստացած իրաւունքը, քայց միայն քարափի ընկերութեան գոհացում կուտար: Կոստանը՝ զգալով որ «խաբօր»-ի մը գոհն եղած է եւ որպէսզի Ֆրանսայի Դրան հետ ունեցած անլըծ հարցերն միանգամ ընդմիջը վրանի ու օսմանեան նենգամիտ կառավարութեան իրենց համբըրութիւնը սուղի նստեցնէ, գոհ չեղաւ քարափներու հարցի լուծումով, պահանջեց: Նաեւ Ֆրանսական միւս քաղաքացիներուն բողոքաբաններին գոհացում՝ սպաննալով մեկնիլ Պոլսն եւ ծամիլ դնել Փարիզէ: Թիւրքիոյ դեսպանը Միւնխի պէյ, մաւաւանը ինչ միջազգային քաղաքակառուցման մէջ Ֆրանսան թեւերը ազատ կըզգայ իր խօսքը քաւեցնելու համար:

Թիւրքերը այս անգամ ալ խաբեցին Կոստանը, ձգձգելով, քաշքշելով իրենց տուած խոստումները, որուն մէջ սուլթան շամիլ ինքնիրեն կուտայ մերթ կայմապատեի մը ինքը, մերթ զմերթ շրջապատողներուն իր գործիքը: Այս մարդուն զանց նստելէն իվեր, թիւրքերու միջազգային դիւանագիտութիւնը անաւոր հակասութիւն մը եւ թիւրիմացութիւն մը եղած է: Սուլթանը, իրեն իր ընկերութեան քաւարը, ամէն բանի մէջ իր քիթը կայ ու կամքը զործարգած է եւ երբեք ալ չէ հասկնալ այդ անհարգապաղ երկրին ոչ միայն գերագոյն, այլեւ տարրական շահերը, հակասակ ինքզինքը բան մը ցցնելու հովերուն: Կը պատմեն, որ հարեմներուն հիացումը եւ... սէրը գարեւոր համար, անոնց կը խօսի եղեր, որ ինք մեծագոյն դիւանագետն է եւ թէ Տաճկաստանը իր օրով փարքի զազաթնակէտը հասած է:

Ֆրանսական դեսպանը, ծարահատ եւ անպատուած զգալով ինքզինքը սուլթանի անպարկեշտութեան եւ խաբեքայութիւններէն, օգոստոս 28-ին ձգեց Պոլսը: Սուլթանը դու չէր սպասեր, որ Կոստանը իր սպաննալութիւնը կը գործարգէ իմանալով այդ սնյուսակի մեկնումը, շունթահաց եղած, որկեց երկու արարողապետներ, սողաչելով, պաղատելով, որ չհեղանայ Պոլսն, խոստանալով որ պատրաստ է նորամտ արտօմութիւնները եւս ընել՝ գուցէ «երջանկութեան դուներ» ալ բանաւ: Կոստան սակայն ետ ծամեց. պալատին այդ լամուները ըսելով որ «սուլթանի բերանացի խոստումներուն այլևս հաւատ չ'ընծայեր. ինդիք փողի վրայ չէ միայն, այլ նաեւ ուղղամտութեան», որով առանց այլեւայլեք մերժեց քանակութեան մտնել եւ ծամեցաւ եւս դէպի Փարիզ, զգեղով ծըրքը սպուլ եւ տեսնուտի դրութեան մէջ եւ իր հետ տանելով Ֆրանսայի կրած անպարտութիւնը:

Թէ որքան լռելիութիւն կայ Կոստանի այդ վճռական քայլին մէջ, ապագան պիտի ցցնէ: «Գիտեմ թէ ի՞նչ կ'արժէ բերանացի խոստումները թիւրքիոյ մէջ», կըսէր Ֆրանսայի դեսպանը: Միայնի պատգամաւորներուն: Եթէ հայկական շարքերուն օրով այդ փորձառու եւ վսեմ լեզուն բանեցնէր... սուլթան շամիլ ազնի փորը կը քաշէ: Մ'ը կընայ քնել թէ «Շէքէր» Կոստանի այդ վարմունքը նոր արտօմութիւններ փորցնելու օրը չէ ճիվանէն, որ արդարեւ եւ ժողովրդասէր քաւաքակառուութեան գործի, չհնակաւորութիւններով եւ օրը յօրանչումներով ժամանակաւ կըլլայ փոփոխալիտ, նենգամիտ, առանց շրջահայեցողութեան եւ հեղատեսութեան, անպարտանմանաչ եւ անպարտաւոր, յարգել, պատիւն առնուած աշխարհի սաղնը Տարի չէ հասկնալ, թէ ինչ ազնիւ ծրագիր ունի թիւրք պետութիւնը իր ժողովրդին քարեկառութեան համար, միայն սա յայտնի է:



որ թէ ներքին եւ թէ արտաքին յարաբերութեան մէջ կը շարժուի միջոց խոյս տալ այն բանէն, ինչ որ կը կոչուի որքերգութեան մէջ տպաւորութեան միտումը:

Գոստանի հեղինակ իւր արեւելեան կատակ-որքերգութեան եւ թիւրքերու տարեգրութեան մէջ շարեկանութիւնէ գերծ չէ: Եթէ շուն է՞ թէ չէ զայ, կ'ըսէ արեւելեան առածը...

**Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Յ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն**

**“Պ Ր Օ Ա Ր Մ Է Ն Ի Ա”**  
(№. №. 17, 18)

Պիեռ Գիլեան 17 թւի կիսամեակը նւիրած է գերմանացի ճանապարհորդ դօկտ. Հիւգօ Կրօթէի մէկ յօդուածին, ուր յիշեալ ճանապարհորդը կը նկարագրէ Տրապիզոնի ու Վարնի միջև տարածած երկրի աւեր ու անապատ վիճակը: Վարգուհանի աւերակներուն յօտ հիւրասիրած է հայ գիւղի մը մէջ, որուն գետնափոր բնակարանները խլուրդի որջերու կը նմանցնէ: Այդ գիւղը, որ շարդերու ժամանակ երեք օր շարունակ լապերու աւերումներուն ենթարկած էր, սարսափելի աղքատութեան մէջ էր՝ աշխատող ձեռքերու կողմէս գաղթելուն պատճառով: Գոստանի ճանապարհորդը երկար ժամանակ չէ կրցած մոռնալ իր տեսած ցաւագին դէմքերը և չի կրնար զսպել իր մէջ տագնապի ու կարեկցութեան զգացում մը, ամէն անգամ որ յիշողութեանը կը ներկայանայ բնութենէն ու մարդերէն ջախջախած և սարսափելի ճակատագրէ մը ընկճած այդ խեղճ ժողովուրդը:

Այս միւսնոյն դօկտորն է—աւելցնենք մեր կողմէն—որ ասկէ երկու տարի առաջ Փոքր-Ասիոյ արևմտեան մասին մէջ կատարած մէկ ճամբորդութենէն ետքը, հետեւեալ անհետեւ գատաստանը կ'ընէր հայերու մասին՝ գերմանական Die Kritik հանդէսին մէջ —

«Արևելք ճամբորդող մը թիւրքերուն կը համակրի, յոյները կ'արհամարհէ, իսկ հայերը կ'ատէ: Հայերը շատ քիչ բացառութեամբ վաշխառուներ ու վաճառականներ են և սղորուկի պէս կը ծծեն տնտեսապէս թիւրք ժողովուրդին արիւնը: Այս կէտին մէջ պէտք է փնտռել հայկական կոտորածներու բուն շարժառիթը»: Իսկ հիմա, անձամբ Հայաստանը պտըտելէ յետոյ, «ուսեալ» դօկտորը ինք իր լեզուով կը լըէ իր թքածը:

Նոյն թւին մէջ Թ. Դօրին «Համիդական կեղծիքներ» վերնագրով յօդուածի մը մէջ ազգուսրէն կը հերքէ սուլթան Համիդի այն յաւիտենական չքմեղանքը՝ թէ ինք պատասխանատու չէ կայսրութեան մէջ կատարած խփփութիւններուն և թէ իր հրամանները չեն գործադրելի վախներու կողմէ: Ետեւեւեւ կողմէ մէջ կը բերէ հետեւեալ երկու հետաքրքրական փաստերը.

Գերմանիոյ Վիլհէլմ կայսրը, Պաղեստինի վերջին ուխտագնացութեան ժամանակ, ոստիկանութեան նախկին նախարար տիրաճառակի «նազմ» փաշայի հետ ունեցած մէկ տեսակցութեանը միջոցին երբ կը հարցնէ թէ՞ որով է վերջին շարդերու իսկական պատասխանատունը, «նազմ» չի վարանիր պատասխանելու՝ «բայց նորին վեհափառութիւնը ինքը»:

Ինչպէս թիւրքերու միջոցով կ'արտայայտուի այստեսանունը

մեկնելէ առաջ պալատ կերթայ, սուլթանին հրամանները ստանալու: Եւ երբ Հաճը Այլ պէյի դայիրէյին մէջ կը նստէր, ներս կը մտնէ եպարքու ճեղքափաշան ու կ'ըսէ. «Փաշա, նորին վեհափառութիւնը կ'իմացնէ ձեզ, թէ վերջին ծայր խստութեամբ պէտք է վարուիք հայերու հետ»:

Եւ երբ ծերունի փաշան կը փորձէր բացատրել թէ խստութիւնը ոչ մէկ լաւ հետեւեւք չի ունենար, ճեղքափաշ կը յարէ՝ իր խօսքերուն վրայ շեշտելով՝ «Իս ձեզ կը կրկնեմ նորին վեհափառութեան հրամանները»:

— Բայց այդ հայերը ապստամբութեան մղել է:  
— Եթէ ապստամբին, լաւ, դուք ալ կը ջարդէք»:

\* \* \*

Մուշե և Սասունի վերջին դէպքերուն մասին Pro Armenia-ին և «Դրօշակին» զարնած հեռագիրները եւրօպական գրէթէ բոլոր մեծ ու փոքր թերթերը արտասպեցին՝ ներքելով այդ առթիւ բողոքի և արդարութեան ցատուով լեցուն՝ բուն նկատողութիւններ, առաջնորդողներ և ուրիշ յօդուածներ: Յիշենք, օրինակ, Temps, Aurore, Autorité, Dailly News, Frankfurter Zeitung և Նիւ Եւրօպական հանրային կարծիքի այս անվերապահ շահագրգռումը ապացոյց է, որ քաղաքակիրթ աշխարհը, առանց կուսակցութիւններու խորութեան, վերջապէս կ'ըմբռնէ հայկական սարսափներու կանխատեսումը և մեծութիւնը:

\* \* \*

La Petite République իր օգոստոս 2-ի թւին մէջ հրատարակած է Փրանսիական խորհրդարանի պատգամաւոր Գիւստավ Բուանէի մէկ ընդարձակ յօդուածը՝ «Հայաստանին համար» վերնագրով:

«Կ'ըսէ յարգելի հեղինակը իր կարևոր յօդուածին մէջ— 95-96-ի ընդհանուր շարդերէն յետոյ աւերի փորձած ու խոհեմած հիմա մասնակի կոտորածներու և սխառմաստիք հարստահարութեան նազ աղմկալի մեթոդով յառաջ կը տանի ամբողջ հայ ցեղը բնաջինջ ընելու իր ծրագիրը: Ետեւեւեւ կը յիշէ «Պրօ Արմենիայի» վերջին երկու պրակները, որոնք լի են սուլթանի այս եղբունագործութիւնը մատնանշող ահուկի մանրամասնութիւններով: «Որովհետեւ շատ հաւանական չէ, կը վերջացնէ յօդուածագիրը, որ պիտիկասէ այս սարսափներու մասին տեղեակ պահելի այն գրասենեակներու կողմէ, որոնց պէտք է ինք, ես մատնացոյց կ'ընեմ իրեն Փրանսական քաղաքի թերթի՝ «Պրօ Արմենիայի» այս վերջին երկու պրակները»:

Միւսնոյն հեղինակը պարիզեան Lanterne լրագրին օգոստոս 30-ի թւին մէջ ևս հրատարակեց առաջնորդող մը, ուրկէ հետեւեալ կտորները կը թարգմանենք.

«Բայց եթէ լաւ ապացուցած է, որ սուլթանի խստութիւններուն վերջը չի դար մինչև որ ահուայ չընդունեն անոր, թերևս յարմար ըլլար որ Փրանսական և մինչև իսկ եւրօպական մամուլը օգուէր այդ դասէն Արգիւ Համիդի հանդիսաւոր խոստումներուն վերաբերմամբ ուրիշ աւելի կարևոր խնդրի մը մասին՝ քան քանի մը տարիէ իվեր անվճար մնացած առևելիքները: Առգեմ խօսել Պոլսոյ վեհափառին հայերուն նկատմամբ ստանձնած յանձնարարութիւններուն մասին: Այս յանձնարարութիւնները երկարատեւ և արժանատի են և կ'ընեն»:

դաշնագրութեան մէջ, զոր ստորագրողներէն մէկն ալ Ֆրանսան է: Ֆրանսական կառավարութիւնը որ Արդիւ Համիդէն չձանչցած առնելիքներու վերաբերեալ քանի մը դրական պահանջներ բանաձեւելէ աւելին ըրաւ, չէր կրնար յիշեցնել Պօլսոյ մենամուլին որ ան դրժած է ուրիշ յանձնառութիւններ քան անոնք, որոնց գործադրութիւնը իրմէն կը պահանջուի: Մանաւանդ որ այս յանձնառութիւնները երկկողմանի են. անոնք նոյնչափ կը պարտաւորեն Ֆրանսան, որչափ սուլթանը: Աճծի տակ երոզ առնելիքներուն հետ Ֆրանսան թող ձեռք բերէ կոտորածներու դադարումը Հայաստանի մէջ, և մէկ անգաման համար մենք պիտի ծափահարենք մեր դիւանատան գործունէութիւնը:»

\* \* \*

Մակեդոնական Բարձր Կոմիտէի նախկին նախագահ Բ. Սարաֆօվի դատի և արդարացման առթիւ «Դրօշակի» խմբագրութիւնը շնորհաւորական մի հեռագիր ուղղեց նրան և հետեւեալ պատասխանը ստացաւ.

Միւրկի ընկերներ,  
Շնորհակալութիւն ձեր շնորհաւորութիւնների համար: Դուրս գալով բանտից, ես աւելի քան երեսուցեցի պիտակցում եմ մեր ընդհանուր կռիւն անհրաժեշտութիւնը յանուն մեր երկրների ազատութեան: Յուսանք, որ մեզ միացնող համերաշխութիւնը դառնալով միշտ աւելի սերտ ու անկեղծ պիտի շարունակւի արապայտելի նաեւ կենդանի գործերով:

Եղբայրական բարեւոյններով

Բ. ՍԱՐԱՖՕՎ

Սօֆիա 27 օգոստ. 1901

Թ Ե Ր Թ Օ Ն

Դ Ա Ր Բ Ն Ի Ե Ր Գ Ը

(Շարունակ. — Ցես № 5)

«Արե՛ լիզնա՛ ես քո խոփը, տանց դարբիննս կռելու, կռնը-կռիւնը սուր ու սուսնը՝ դուրմանի դէմ կռելու: Եղբայր շայր, առ՛ք խոփը, տէք դարբիննս կռելու, կռնը-կռիւնը սուր ու սուսնը՝ չարատաննս լիզելու:»  
ԳԱՄԱՌ-ՊԱԹԻՊՍ

V

Պարուն է որդիք, գործի ժամանակ,  
Գործն է վերջ տալիս ցաւին ու հոգսին,  
Ով չի կամենում հեծել լծի տակ,  
Նա ուժ պիտի տայ բազկին ու մէջքին:  
Գարուն է որդիք, ամենքն են գործում,  
Գործն է գին տալիս մեր ցաւոս կեանքին,  
Սև օրը ծով է բախան է պահասում,  
Բախալը չէ տւած անգործ անձարին:  
Թէ ուրիշները քրտիկք են թափում,  
Մենք պիտի թափենք արիւն ու քրտիկք:  
Ով երկունք ունի, նա ջանք է տնում,  
Երկունքի ցաւը օրհնել է երկինք:  
Ողջ տիեզերքը երկունք է վաստակ,  
Ծաւն է հիմունքը պտղաբերութեան,  
Կեանքի երկունքը խորն է, անյատակ,  
Նրա ծնունդը պէս-պէս անսահման:  
Ծաւով է ծնւում ծիլը ծաղիկի  
Հողի տակ պառկած փոքրիկ սերմից:

Ծաւով է բացւում թերթը կոկոնի  
Ուռած, բողբոջած բոյսի արգանդից:  
Ծաւով է ծնւում զաւակը յօրից —  
Բաղբը պտուղը վշտի, խնդութեան.  
Ծաւն է դառն արցունք քամում աչքերից  
Այրուղ սրտերի բոցերի վրան:  
Ծաւ է կարկաչում ծնունդի ճիգով  
Ժայռի խոռոչում վտակը խնդրած,  
Հին ցաւն է հեգնում ուրախ քրքիւով,  
Երբ դուրս է ժայթքում կապանքից փրկւած:  
Ծաւ է մռնչում գարաւոր կաղնին  
Ծանր կացինի բերտ հարածներէց,  
Այդ ցաւի ձայնը կեանք է շատերին. —  
Որչափ բախտեր են ծնւում մի մահից...  
Երկիրը գարնան ցաւ է մրմնջում,  
Երբ յօշոտում է սուր խփը նրան,  
Կեանքն այդ մրմունջէց իր երգն է հիւսում —  
Մեծ երգը վշտի, նաև ցնծութեան:  
Ծաւ է սուսփում տերևը դեղնած  
Մեղմ օրօրելով ոստիկի վրան,  
Ծաւի երգ ունի քամին մոլորած —  
Երգ լուռ վշտերի, մաշլ գիշերուան:  
Կոշտացած սիրտը վշտի երկունքով  
Փափկում է ինչպէս ախօսած երկիր,  
Եւ ազնիւ սիրտը ցօղած արցունքով  
Սրբազան յոյսն է ծլում անպատիր:  
Թանձր ամպերը կախում են վերում՝  
Կենսատու անձրև ուսերին շալկած,  
Դժբախտ երկիրը հեծում է վարում՝  
Սաստիկ երաշտով խանձած, պապակած:  
Բայց երբ կայծակը բոցոտ ախօսով  
Պատում է կուրծքը թղպոտ ամպերին,  
Ցօղերն են իջնում զով կաթիլներով,  
Նոր կեանք շնորհում տառապող երկրին:  
Բնական ցաւից աւելի հզօր  
Դուշմանը ցաւ է գրել մեր մէջքին.  
Արիւնն է բռնել մեր գաշտեր ու ձոր,  
Ծաւն է լոկ տէրը մեր դժբախտ երկրին:  
Ախ... Քանի՛ դարեր մեր մէջքը ծուխը,  
Ուղիղ մէջքերս, մեր չար դուշմանին,  
Ճակատնիս գեանին, չտեսանք երկինք,  
Արցունք ու մոխիր մնաց մեզ բաժին...  
Հայրենի հողը թրջինք արցունքով  
Մոխիր գլխներին ցանեց թշնամին,  
Մեր հպարտ մէջքը մի անգամ ծուխը,  
Հարիւր տարիներ սողացինք գետին:  
Հառաչանքս աղերս՝ ողջ իլուր անցան.  
Գտող յաղթողը չի նայում գետնին...  
Վայ՛ նրանց, որոնք ոտքի տակ ընկան, —  
Ով չի արորում՝ սողացող ճիւղունին:  
Գետերն են կարմիր, մեր հողերը սև,  
Մեր արցունքը ծով, բախալը վերացած,  
Մեր ցաւերը խոր, խաւար մեր արև,  
Հայրենիքը մեր երկունքով բռնւած...  
Խաղաղ վաստակը կորաւ մեր երկրից,  
Արեան, պայքարի ժամանակ հասաւ...  
Թող այս գարունն էլ անցնի մեր գլխից, —  
Գարունն ի՛նչ պէտք է, երբ ցաւն է անբաւ:  
Արիւնոս հողի կուրծքը սևացած

Պողկատէ խոփն էլ անզօր է պատուել  
 Այնտեղ, ուր սրով սկօր է փուած,  
 Ել ո՛վ կարող է հատիկներ ցանել...  
 Արիւնտ հողի սեւացած կրօքից  
 Լօկ փուշ ու աստասկ ծըլեր կ'արձակեն.  
 Նրանց սե ծալկի, սե թերթիկներից  
 Վրէժի, թոյնի կաթիլներ կ'ընկնեն...

VI

Նոր զնդան ունենք կարծր պողկատից՝  
 Վառման հնօցի արգանդից վիժած.  
 Մուրճեր էլ ունենք՝ ծանր մէկ մէկից,  
 Բոլորն էլ հնօցի բոցերում զուած:  
 Խաղաղ վաստակի այդ գործիքներով  
 Ել չենք կոի մենք խօփ ու մանգաղներ.  
 Խօփերն իզուր են, ուր արիւնն է ծով.  
 Ծով արեան հանդէպ թնդ գործեն սրեր:  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին  
 Դէ՛հ, եկէ՛ք, որդիք... Հզօր մուրճերով  
 Ձեզանի վրայ փշռենք հին խօփեր,  
 Եւ փշրած խօփի այդ բեկորներով  
 Կռնք ու կոփենք հասու սուսերներ:  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Ահա Գուրգէնը հուրը բորբոքեց.  
 Հարւեցէք, որդիք, զնդանի բոլոր,  
 Հին խօփն հնօցում դեղնեց ու փափկեց,  
 Սուր պիտի կռնք, սրեր փառաւոր:  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Չարիքի ձեռքից հեծող շէտարհում  
 Սուրն է զօրավիշ սրբաշան դատին.  
 Բախտի գաղտնիքը լռի սուրն է լռածում,  
 Նա է վերջ աւրիւ ցաւօտ օրերին:  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Սերմը շան, որդի, քո ծանր մուրճով  
 Ամենից առաջ դու զարկ այս խօփին.  
 Ձեզանն ամուր է պատած պողկատով —  
 Ձարկ անվախ, որդի, մատաղ քո թէկն:  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Դէ՛հ, դուք էլ, որդիք, զարկեցէք մուրճեր,  
 Փշռեցէք խօփը հազար կոտորով...  
 Խօփին էր կաշւած սե բախտ, սե օրեր,  
 Խօփը մեր կեանքը պատեց ցաւերով...  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Չարկեցէք, որդիք, փշռեցէք խօփեր.  
 Թնդ դժոխք դաւանայ խաղաղ գործանօց...  
 Խաղաղ վաստակի զուր են գործիքներ,  
 Հօգիւններն են հուր, մեր սրտերը խօց:  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Չարկեցէք, որդիք... Ձեր մուրճի ձօնից  
 Կուր արձագանքով թնդ թնդան սրեր.  
 Չարկեցէք, որդիք, փշրած խօփերից  
 Մահու ու արեան կռնք գործիքներ:

Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին:  
 Ե՛յ, ի՛նչ էք կանգնել վզերդ ծած,  
 Հողը ձեզ տանի, կոյր հարւաններ...  
 Ել արդարութիւն, պատիւ շմաց, —  
 Խօփերդ բերէ՛ք, կռնք սուսերներ...  
 Մեղքը մերը չէ, անէ՛ծք դուշմանին,  
 Նա՛ պարզեց դրօշ արիւնոտ մարտին...  
 (Շարունակելի)

ՂԱՐԻԲ

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

Յ. քաղաքից Ս.-ի միջոցով (300 ու.) 795 Քրիստոս, 1 ժամբողջ  
 Դից 10 Քր., ՈՍԿԱՆԱԳՍՏԻՑ 794 Քր. 60 սանթ., Տ. Աւետիգ  
 10 Քր.: Անցողից 70 Քր.: Գումար 1669 Քր. 60 սանթիւ:

ՈՍԿԱՆԱԳՍԻ Կօմիտէն՝

1901 յունիսի մուտքը՝ «Փայլակ» խ. 10 դարեկան, Բորնիկ  
 19, Հրացանի եւ Ոմ 20-ական դարեկան, «Աղանի» խումբ  
 6. 25, Ատրճանակ 5. 25 եւ Լուսին 6. 25, Ջիւղուր 20, «Արար»  
 է. 70, Գլխարկ 5: ԱՐՏԱԿԱՆԱՆՆԷՆ՝ «Ծրկիւղած» եւ «Ազգասէր»  
 խմբերէն 33, Նէր Սերոբ-Աղբիւրէն 20, Ջեփիւրէն 45 դարեկ.:  
 Գումարը 329. 75 դարեկան ողջ:

Վրոյնից. — «Գրօշակ»-ի 1901 թ. N° 4-ի Ոսկէհանքի ցանկին  
 մէջ ըսւած է՝ «Մահ» 11 դիւ, պէտք է ըլլայ «Մահ» 60 դարեկան:  
 «Արաշտանան» խմբի անհատ ըսւած է, պէտք է ըլլայ «Արաշտանան»  
 խմբի անհատը:

ԱՆՔՍԱՆԳՐԻՈՑ Կօմիտէն՝

Յոյս 40 դարեկան ողջ, Ազիզ 80, «Միութիւնը փրկութիւն է»  
 10, Իցախիմաստ 20, Սրտոտ 10, Նըզօ 16, «Տիգրան» խ. 170. 5,  
 Շաւաղի 40, Յուլի 97. 5, Ջիւսանշան 8, Ս. Թ. 195, Մեղու  
 262. 5, Մ. Չ. 50, Կարօ 38, Հայկ 30, Արգար 15, Սարգստ 44,  
 Շահան 20, Ջոյրապ 32, Գուրգէն 10, Սաֆօ 15 դիւ: Գումար  
 1189. 5 դարեկան ողջ:

ՎԻՃԱԳԻ Կեդր. Կօմիտէն՝

«Ամստունի» խ. 50 դարեկան, Հոսանք 2, Մօսին 3, Ջարսլայր  
 4, Հոսանք 3, Նէր 67, «Կախաղան» խ., «Հոսանք» խ., «Հիդրա»  
 է., Գարտաշաճաճութիւն 5-ական, «Կալք» խ. 15, «Արծիւ» խ. 27,  
 Հոսանք 20 դիւ: Գումար 211 դարեկան:

ՆԱԿԱՎԱՆԳՍՏԻ Կեդր. Կօմիտէն՝

ԿԱՐՄԻՐ ՁԱՂԱՔԻՑ Կարմրաթշ. միջոցով 100 ուրլի, Բ.  
 «Կայեակ» խ. 20, «Սոսէան» խ., «Աղբիւր» խ., Օր-ի «Անուծ»  
 է., ԱՐԱՇՏԷՆԻ «Գողութ» խ. 10-ական, մի բանտարկեալի յս-  
 մած ՄԱՆՆԱՆ, Վիշապ, Միսիան, Կայծակ 5-ական, Գ. Գաւ 5,  
 Գ. Գառ 1 ու ԱՂԱՔԱՎԱՅՐԻ Նոր Գիւղից՝ «Յոճարակամ» խ. 1699  
 ցաւանից ստացած 16, Ժողկամոցից Արիսալան 5 ուրլի:  
 ՆՈՐ ՁԱՂԱՔԻՑ Գողութ 3 ուրլի, Կազաւ 2, Ծղբոս, Սի-  
 գան, Գուրաթ, Անքոսանց արիւն, Բերդ, Խաւրճիկ, Արծիւ, Կայ-  
 ծակ, Վաշիկ, Աճճէ, Տալլասող, Գիսկօլ մէկ-մէկ-ական: ԴԱՇՑ  
 քաղաքի իստոյթն է 1900-1901 յունիս. 30 Դաշտից 192 ու. 40  
 կողմ: Գրեթէ խմբից 135 ու. Ամստունից խմբից 97, ԱՂ. քա-  
 ղաքի խմբից 45, Օր քաղաքից Նիդրաուսիւն 300, սեղական  
 մատուցի մէջ ստացած է՝ Սամուէլից 5 ուրլի: Գումար 1690  
 ուրլի 40 կապէկ:

Վրոյնից. — N° 5 «Գրօշակ» մէջ սխալմամբ կրկնուած է  
 ԳՂԱՔԱՎԱՅՐԻ ՁԱՊՈՂ զիւղից Մ. Միւ. 15 ուրլի:

ԱՍՏԻՐԿԱ

ՆՐՇՈՒՆԻ Կօմիտէն՝ Յ. Կ. 2 դուր 60 սէնթ, Գ. Կ. Կ.  
 2 դուր, Խ. Ե. 2. Գ. Մ. Գ., Վ. Ի., Գաւ, Կ. Կ. մէկմէկ-  
 ական 45. 8. 8. Ա. Ե., 2. 8., Գ. Մ., Խ. Գ., 8. 2., Կ. Կ.,  
 Ժ. Ա., 8. Գ., Ա. Գ., Ա. Լ., Սորճ, Հորտէկի, Գ. Ա., 2. Կ.,  
 8. Խ., Գ. 2. 30-ական սէնթ, Մ. Փ., Գ. Կ., Մ. Օ., 2. Կ.,  
 Կ. Յաւակ, Գ. Ե., Կ. Մ., Գ. Գ., Մ. Ս. 25-ական սէնթ: Գու-  
 մար 21 դուր 60 սէնթ:

## Վ Ե Ր Զ Ի Ն Ե Ա Ր Ա Թ

Մուշ-Սասունեան խողովորդ լուրերը, տարածւած արդէն եւրոպական շրջաններու, զուգարհիպեցին քաղաքական երեք անցքերի, կատարւած միմիանցից անկախ, ջոկ-ջոկ երկրներում, յօգուտ Հայկական բարենորոգումների իրագործման:

Դրանք են:

- 1) Խաղաղութեան Համաժողովի որոշումը,
- 2) Միացեալ Նահանգների նախաձեռնութիւնը,
- 3 Իմուռնի Ֆրանսիական արտաքին գործերի նախարարին:

Աւշ Համարելով «Դրօշակի» առաջիկայ Համարին սպասելը, շտապում ենք Հայ Հասարակութեան Հաղորդել վերջն շարաթւայ այդ անցքերի Համառօտութիւնը՝ իբրև «Յաւելւած» օգոստոսի Համարի: Մանրամասները ապագային:

### I. Խ Ա Ղ Ա Ղ Ո Ւ Թ Ե Ա Ն X-ՐԻ Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

Միջազգային Խաղաղութեան Համաժողովը, դուրսբերւած սեպտեմբերի 10-13-ին Անգլիայի Գլազգով քաղաքում, իր երկրորդ օրւայ նիստը նւիրեց Հայկական Հարցին: Բացի Բէրնի Միջազգային Բիւրօյի դիմումից, Համաժողովին ներկայացւեց Ֆրանսերէն լեզուով տպած մի գեկուցագիր՝ Հայաստանի վիճակի վերաբերմամբ: Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոնց մասնակցում էին Հայեր, ռուսներ, Ֆրանսիացիներ և անգլիացի միսիօնարներ, Համաժողովը ընդունեց հետևեալ որոշումը.

«Խաղաղութեան 10-րդ Համաշխարհային ժողովը, գումարւած Գլազգովում, 1900 թ.ի սեպտեմբերին, տեղեկանալով Բէրնի Միջազգային Խաղաղութեան մասյուն ընտրոյի ղեկուցման, մի յիշատակագրի հայերի ներկայ վիճակի մասին թիւրքիայում՝ ներկայացւած հայ հրապարակախօս պ. Հ. Առաքելեանի միջոցով, եւ մի նամակի Միացեալ Նահանգների Խաղաղութեան ընկերութիւնների կողմից.

«Ն կ ա տ ե լ ո Վ, որ հայ ժողովրդի տիտը դրութիւնը բնաւ չէ բարելաւուել, որ կտորածները եւ խօսքութիւնները շարունակուում են Հայաստանում, որ Բեռլինի դաշնակցի ստորադրող եւրոպական պետութիւնները ոչ

մի հաւաքական ջանք չեն արել վերջ դնելու այս դժբախտ քրիստոնեայ ազգի վերաբերմամբ սխտէմատիքաբար կատարուող անպիտանութիւններին, —

Վ ճ ո ս ո մ է՝  
«Ուղարկել Բեռլինի դաշնակցի ստորադրող եւրոպական պետութիւններին մի խնդրագիր, որպէս զի նրանք մի պաշտօնական կօնֆէրանս դուրսբերեն վճարու համար հայկական հարցը՝ գործադրելով 1895-ի մայիսի բարենորոգումների ծրագիրը, որ մշակել են անպիտան, Ֆրանսիական ու ռուսական կառավարութիւնները եւ ընդունել է նոյնիսկ սուլթանի կողմից»:

### II. Մ Ե Ա Յ Ե Ա Ղ Ն Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ջ Ե Ռ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Սեպտեմբերի 10-ին Գլազգովի Համաժողովը ստացաւ մի հեռագիր, որով Հաղորդուում էր թէ՛ «Միացեալ Նահանգների Խաղաղութեան ընկերութիւնները մի ուղերձ են ստորագրել տալիս ամերիկական ժողովրդին, ուղղած Միացեալ Նահանգների նախագահին, որպէս զի վերջինս միջնորդէ եւրոպական պետութիւնների առաջ՝ կ օ ն ֆ էր ա ն ս գումարելու Հայկական Հարցը լուծելու նպատակով»: Հաղորդելով այդ, Ամերիկայի Խաղաղութեան ընկերութիւնները խնդրում են Խաղաղութեան Համաժողովից՝ ուժ տալ իրենց ձեռնարկին: Համաժողովի որոշումը, որ վերև բերեցինք, պարզ ապացոյց է, որ Խաղաղութեան ժողովը կատարելապէս կողմնակից Հանգիստացաւ այդ գեղեցիկ առաջարկին:

### III. Գ Ի Մ Ո Ւ Մ Ֆ Բ Ր Ա Ն Ս Ի Ա Կ Ա Ն Ա Ր Տ Ա Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր Ի Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ն

Պարիզի Temps լրագրի սեպտեմբերի 14-ի Համարում, խմբից այլոց, տպագրւած է.

«Ֆրանսիական արտաքին գործերի նախարար պ. Դելկասէ այսօր ընդունեց Pro Armenia-ի խիստ պարսկապաշտ Գործող Կուսակցութեան ձեռնարկը, որը նրան յանձնեց minimum րէ-լու»:

«Դրօշակի» խմբագրութիւնը՝ ա ն պ ա տ ե Ւ Տ Հ Համարելով իր կողմից աւելացնել ուրիշ մանրամասներ, բաւականանում է վաւերացնելով վերևի լուրը: